


4373

3KN

2-22

1936



Պրոլետարներ բոլոր յերկրները, միացե՛ք.

11 JUL 2005  
14 NOV 2009

ՅԿԴ  
2-22  
uV

ՀԱՄ. Կ(Բ) Կ ԾՐԱԳԻՐԸ  
ՅԵՎ  
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

55801  
40855

544



Ա.Դ.ԿՈՒՍԶՐՍ  
ԱԳՈՒ — 1936

17.09.2013

4373

## ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՏ

Համաիթեռնական .կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության ծրագրի ու կանոնադրության այս հրատարակությունը բովանդակում և ամփոփոխ կերպով, կուսակցության բնագրի տեքստը՝ ընդունված կուսակցության VIII համագումարի կողմից, և կուսակցության կանոնադրության տեքստը՝ ընդունված կուսակցության XVII համագումարի կողմից: (Ծրագրի տեքստում ՌԿԿ անունը փոխարինված և ՀամԿԿ-ով, համաձայն XIV համագումարի վորոշման՝ կուսակցության անվանումը փոխելու մասին):



**ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ  
(ԲՈՒՇԵՎԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԾՐԱԳԻՐԸ**

ԸՆԴՈՒՎԱԾ Ե ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ Ց-ՐԳ  
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿՈՂՄԻՑ  
(1919 թ-վի ՄԱՐՏԻ 18-23)

1917 թ. նոյեմբերի 7-ի (հոկտեմբերի 25-ի) Հոկտեմբերյան հեղափոխութիւնը Ռուսաստանում իրագործեց պրոլետարիատի զիլտատու լան. չքավորազուն գյուղացիութիւնը կամ կիսապրոլետարիատի աջակցութեամբ պրոլետարիատն սկսեց կոմունիստական հասարակութեան հիմքը կառուցել: Հեղափոխութեան զարգացման ընթացքը Գերմանիայում և Ալատրո - Հունգարիայում, պրոլետարիատի հեղափոխական շարժման աճումը բոլոր առաջավոր յեկիրներում, այդ շարժման խորհրդային ձևի տարածումը, այսինքն այնպիսի ձևի, վորը տանում է դեպի

պրոլետարիատի զիկտատուրայի ուղղակի իրա-  
գործումը, — այս ամենը ցույց տվեց, Վոր  
սկսվել է համաշխարհային պրոլետարական կո-  
մունիստական հեղափոխութեան դարաշրջանը:

Այդ հեղափոխութեան անխուսափելի ար-  
դյունք էր կապիտալիզմի զարգացման, վորը  
(կապիտալիզմը) դեռևս տիրապետում է քաղա-  
կակիրթ յերկրներէ մեծ մասում: Կապիտալիզ-  
մի և բուրժուական հասարակութեան ելությու-  
նը մեր հին ծրագիրը ճշտորեն, յեթե չհաջվենք  
կուսակցութեան՝ սոցիալ — դեմոկրատական վոչ  
ճիշտ անունը, բնորոշել է հեռակալ դրոյթներ-  
րով:

«Այդպիսի հասարակութեան գլխավոր հատ-  
կանիչն սպրանքային արտադրութեանն է, վոր  
հիմնված է կապիտալիստական արտադրական  
հարաբերութեաններէ վրա, վորոնց առկայու-  
թեան դեպքում արտադրութեան միջոցներէ յեւ  
սպրանքներէ շրջանառութեան ամենից կարևոր  
և նշանակալի մասը պատկանում է քանակով  
փոքրաթիվ մի դասակարգի անձերի, մինչդեռ  
բնակչութեան խոշոր մեծամասնութեանը կող-  
մում են պրոլետարները և կիսապրոլետարները,

վորոնք իրենց անասական դրուժյամբ ստիպ-  
ված են շարունակ կամ պարբերաբար վաճառել  
իրենց աշխատանքային ուժը, այսինքն կապիտա-  
լիստներէ վարձկանը դառնալ, և իրենց աշխա-  
տանքով հասարակութեան բարձր դասակարգե-  
րի յեկամուտն ստեղծել:

«Կապիտալիստական արտադրական հարաբե-  
րութեաններէ տիրապետման շրջանն ավելի ու  
ավելի յե ընդլայնում, վորչաիվոր սեխնիկայի  
մշտական կատարելագործումը՝ մեծացնելով խո-  
շոր ձեռնարկութեաններէ տնտեսական նշանա-  
կութեանը, դուրս է մղում մանր ինքնուրույն  
արտադրողներին, նրանց մի մասին պրոլետար  
դարձնելով, մնացածներէ դերը սահմանափակե-  
լով հասարակական — տնտեսական կյանքում յեւ  
տեղ — տեղ նրանց քիչ թե շատ լիակատար, քիչ  
թե շատ բացահայտ, քիչ թե շատ ծանր կախ-  
ման մեջ դնելով կապիտալից:

«Բացի այդ՝ նույն տեխնիկական պրոգրեսը  
հնարավորութեանն է տալիս ձեռնարկատերերին  
ավելի մեծ չափով կիրառել կանանց և յերեխանե-  
րի աշխատանքն սպրանքներէ արտադրութեան և  
շրջանառութեան պրոցեսում: Իսկ վորովհետև,  
մյուս կողմից, այդ պրոգրեսը հարաբերականո-

րեն պահպանեցնում ե ձեռնարկատերերի կարիքը աշխատանքային կենդանի ուժի նկատմամբ, ուստի բանվորների ուժի պահանջն անհրաժեշտաբար հետ ե մնում նրա առաջարկից, դրա հետե վանքով մեծանում ե վարձու աշխատանքի կախումը կապիտալից և բարձրանում նրա շահագործման աստիճանը:

«Այսպիսի դրուժյունը բուրժուական յերկըր ների ներսում և նրանց մշտապես սրվող փոխադարձ մրցակցությունը համաշխարհային շուկայում ավելի ու ավելի յեն դժվարացնում միշտ աճող քանակությամբ արտադրվող ապրանքների վաճառահանությունը: Գերարտադրությունը, — վոր յերևան ե դալիս քիչ թե շատ սուր արդյունաբերական ճգնաժամերի մեջ, վորոնց հետե վում են արդյունաբերության լճացման քիչ թե շատ տևական շրջաններ, — բուրժուական հասարակության արտադրողական ուժերի զարգացման անխուսափելի հետևանքն ե: ճգնաժամերը և արդյունաբերության լճացման շրջաններն իրենց հերթին ավելի ևս քայքայում են մանր արտադրողներին, ավելի ևս մեծացնում են վարձու աշխատանքի կախումը կապիտալից, ավելի ևս արագացնում են բանվոր դասակարգի դրուժյան

հարաբերական, իսկ յերբեմն ել բացարձակ վատ թարացման ընթացքը:

«Այսպիսով տեխնիկայի կատարելագործումը, վորը նշանակում ե աշխատանքի արտադրողականության ավելացում ու հասարակական հարստության աճում, բուրժուական հասարակության մեջ պայմանավորում ե հասարակական անհավասարության աճումը, ունեւորների և շու նեւորների միջև յեղած տարածության մեծացումը՝ աշխատավոր մասսաների ել ավելի լայն խավերի համար ապրուստի անապահովության, անգործության ու բազմատեսակ դրկանքների աճումը:

«Բայց բուրժուական հասարակությանը հատուկ այս բոլոր հակասությունների աճումին ու զարգացմանը համաչափ աճում ե նաև աշխատավոր և շահագործվող մասսայի դժգոհությունը գոյություն ունեցող կարգերից, աճում ե պրոլետարիների թիւն ու համախմբվածությունը յեվ սրվում ե նրանց պայքարն իրենց շահագործողների դեմ: Միևնույն ժամանակ տեխնիկայի կատարելագործումը, համակենտրոնացնելով արտադրության և շրջանառության միջոցները յեվ հանրայնացնելով աշխատանքի պրոցեսը կապի-

տալիստական ձեռնարկություններում, ավելի ու ավելի արագ նյութական հնարավորություն է ստեղծում կապիտալիստական արտադրական հարաբերությունները կոմունիստականներով փոխարինելու համար, այսինքն՝ այն սոցիալական հեղափոխության համար, Վորը միջազգային կոմունիստական կուսակցության՝ Վորպես գասա կարդային շարժման գիտակից, արտահայտչի՝ ամբողջ դործունեյության վերջնական նպատակըն է կազմում:

«Փոխարինելով արտադրության և շրջանառության միջոցների մասնավոր սեփականությունը հասարակականով և հասարակական – արտադրողական պրոցեսի պլաննաչափ կազմակերպություն մտցնելով՝ հասարակության բոլոր անդամների բարեկեցությունն ու բազմակողմանի զարգացումն ապահովելու համար՝ պրոլետարիատի սոցիալական հեղափոխությունը կվոչնչացնի հասարակության բաժանումը դասակարգերի և գրանով կազատագրի ճնշված ամբողջ մարդկությունը, քանի վոր վերջ կղնի հասարակության մի մասը մյուսի կողմից շահագործելու բոլոր ձևերին:

«Սոցիալական այս հեղափոխության անհրաժեշտ պայմանը պրոլետարիատի դիկտատուրան է, այսինքն՝ պրոլետարիատի կողմից մի այնպիսի քաղաքական իշխանություն նվաճելը, Վորը նրան հնարավորություն տա ճնշելու շահագործողների ամեն մի դիմադրություն: Նպատակունենալով ընդունակ դարձնել պրոլետարիատին իրագործելու իր պատմական մեծ միտիան, միջազգային կոմունիստական կուսակցությունը կազմակերպում է նրան Վորպես բոլոր բուրժուական կուսակցություններին հակադիր ինքնուրույն քաղաքական կուսակցություն, դեկավորում է նրա դասակարգային պայքարի բոլոր արտահայտությունները, նրա առջև մերկացնում շահագործողների և շահագործվողների շահերի անհաշտ հակադրությունը և պարզաբանում է նրան առաջիկա սոցիալական հեղափոխության պատմական նշանակությունն ու անհրաժեշտ պայմանները: Դրա հետ միասին՝ նա մնացած աշխատավոր և շահագործվող ամբողջ մասսայի առջև յերևան է հանում նրա դրության անհուսալիությունը կապիտալիստական հասարակության մեջ և սոցիալական հեղափոխության անհրաժեշտությունը հա-

նուն նրա սեփական ազատագրման կապիտալի  
ճնշումից: Բանվոր դասակարգի կուսակցությունը՝  
կոմունիստական կուսակցությունը դեպի իր  
չարքերն է կոչում, աշխատավոր և շահագործ-  
վող բնակչության բոլոր խավերին, վորչափով  
նրանք պրոլետարիատի տեսակետին են անց-  
նում»:

Կապիտալի համակենտրոնացման և կենտ-  
րոնացման պրոցեսը, վոչնչացնելով ազատ  
մրցակցությունը, քսաներորդ դարի սկզբ-  
բին առաջ բերեց կապիտալիստների հզոր մե-  
նաչնորհային միություններ՝ սինդիկատներ,  
կարտելներ, տրեստներ, վորոնք վճռական նշա-  
նակություն ստացան ամբողջ տնտեսական  
կյանքում, առաջ բերեց բանկային կապիտալի և  
ահազին չափերով համակենտրոնացած արդյու-  
նաբերական կապիտալի միաձուլում և կապիտա-  
լի ուժեղ արտահանում դեպի ոտար յերկրներ:  
Տրեստները՝ ընդգրկելով կապիտալիստական պե-  
տությունների ամբողջ խմբեր, սկսեցին տնտե-  
սական վերաբաժանման յենթարկել աշխարհը,  
վորն ամենահարուստ յերկրները միջև տերիտո-  
րիալ կերպով արդեն իսկ բաժանված եր: Ֆրանս

տական կապիտալի այդ դարաշրջանը, վոր ան-  
խուսափելի կերպով սրում է պայքարը կապիտա-  
լիստական պետությունների միջև, իմպերիալիզ-  
մի դարաշրջանն է:

Այստեղից անխուսափելիորեն բղխում են իմ-  
պերիալիստական պատերազմներ, պատերազմ-  
ներ՝ վաճառահանման շուկաների, կապիտալի  
գործադրության շրջանների, հումուլթի և բան-  
վորական ուժի համար, այսինքն՝ համաշխար-  
հային տիրապետության և մանր ու թույլ ժո-  
ղովուրդների վրա իշխելու համար: Հենց այդ-  
պիսի բնույթ ունի 1914 - 1918 թ. թ. առաջին  
մեծ իմպերիալիստական պատերազմը:

Յե՛վ համաշխարհային կապիտալիզմի դար-  
գացման չափազանց բարձր աստիճանն ընդհան-  
րապես, և՛ ազատ մրցակցության փոխարինումը  
պետական - մենաչնորհային կապիտալիզմով,  
և՛ արդյունքների արտադրության ու բաշխման  
պրոցեսի հասարակական կարգավորման ապա-  
րատ պատրաստելը բանկերի, ինչպես նաև կա-  
պիտալիստների միությունների միջոցով, և՛ կա-  
պիտալիստական մենաչնորհների աճման հետ  
կապված՝ թանգության ու սինդիկատների գոր-  
ծադրած ճնշման աճումը բանվոր դասակարգի

վրա, սրա ստրկացումն իմպերիալիստական սե-  
տության կողմից, պրոլետարիատի տնտեսական  
ու քաղաքական պայքարի ահադին դժվարացու-  
մը, և՛ իմպերիալիստական պատերազմից առա-  
ջացող սարսափները, արհավիրքներն ու ավերա-  
ծությունները, — այս ամենն անխուսափելի յեն  
դարձրել կապիտալիզմի կործանումն ու հասարա-  
կական տնտեսության ավելի բարձր տիպին անց  
նելը:

Իմպերիալիստական պատերազմը չէր կարող  
վերջանալ վոչ միայն արդարացի հաշտու-  
թյամբ, այլև ընդհանրապես նրանով, վոր բուր-  
ժուական կառավարությունները քիչ թե շատ  
կայուն հաշտություն կնքեն: Կապիտալիզմի  
զարգացման՝ հասած աստիճանի վրա պատերազ-  
մըն անխուսափելիորեն վերածվել և մեր աչքի  
առաջ վերածվում է շահագործվող աշխատավոր  
մասսաների, նրանց դուրսն անցած պրոլետա-  
րիատի քաղաքացիական պատերազմի՝ ընդդեմ  
բուրժուազիայի:

Պրոլետարիատի աճող դրոհը և մանավանդ  
նրա հաղթություններն առանձին յերկիրներում՝  
ուժեղացնում են շահագործողների դիմադրու-  
թյունը և առաջ են բերում կապիտալիստների

միջազգային միավորման նոր ձևեր (Ազգերի լի-  
գա և այլն), վորոնք համաշխարհային մասշտա-  
բով կադրակերպելով յերկրագնդի բոլոր ժողո-  
վուրդների սխտեմատիկ շահագործումը, առա-  
ջին հերթին իրենց ջանքերն ուղղում են անմի-  
ջականորեն ճնշելու բոլոր յերկրների պրոլետա-  
րիատի հեղափոխական շարժումները:

Այս ամենն անխուսափելիորեն զուգորդում  
են առանձին պետությունների ներսում մղվող  
քաղաքացիական կռիվը այն հեղափոխական պա-  
տերազմների հետ, վոր մղում են թե պաշտպան  
վող պրոլետարական յերկիրները և թե ճնշվող  
ժողովուրդները՝ իմպերիալիստական պետու-  
թյունների լծի դեմ:

Այս պայմաններում պացիֆիզմի, կապիտա-  
լիզմի որով միջազգային ղինաթափման, միջ-  
նորդ դատարանների և նման լողունդները վոչ  
միայն հետադիմական ուտոպիաներ են, այլև  
աշխատավորներին ուղղակի խաբելու միջոց,  
վորի նպատակն է ղինաթափել պրոլետարիա-  
տին և նրան հեռու պահել շահագործողներին ղի  
նաթափելու խնդրից:

Միայն պրոլետարական կոմունիստական հե-  
ղափոխությունը կարող է հանել մարդկություն-

նրն իմպերիալիզմի և իմպերիալիստական պատե-  
րազմներն ստեղծած փակուղուց: Ինչպես ել վոր  
լինեն հեղափոխական դժվարությունները և նրա  
հնարավոր ժամանակավոր անհաջողություննե-  
րը կամ հակահեղափոխական ալիքները, — պրո-  
լետարիատի վերջնական հաղթանակն անխուսա  
փելի յէ:

Համաշխարհային պրոլետարական հեղափո-  
խության այդ հաղթանակը պահանջում է առա  
ջավոր յերկիրներն բանվոր դասակարգի լիակա  
տար վստահությունը, ամենասերտ յեղբայրա-  
կան միություն և հեղափոխական գործողու-  
թյունների ըստ կարելույն առավել միասնակա-  
նություն:


Այս պայմաններն անիրադրձելի յեն, յեթե  
սկզբունքորեն վճռականապես չխզվեն կապերը  
սոցիալիզմի բուրժուական խեղաթյուրման հետ  
և անխնա պայքար չմղվի այդ խեղաթյուրման  
դեմ, վոր հաղթանակել է պաշտոնական սոցի-  
ալ-դեմոկրատական և սոցիալիստական կուսակե-  
ցությունների վերնախավերում:

Այսպիսի խեղաթյուրում է մի կողմից ուր  
տունիզմի և սոցիալ - շովինիզմի՝ խոսքով սո-  
ցիալիզմի, գործով՝ շովինիզմի հոսանքը, սեփա

կան աղապսին բուրժուադիալի թալանչիական  
չահերի պաշտպանությունը հայրենիքի պաշտ-  
պանության կեղծ լողունդով քողարկելն ինչպես  
առհասարակ, այնպես ել հատկապես 1914—1918  
թ. թ. իմպերիալիստական պատերազմի ժամա-  
նակ: Այս հոսանքն ստեղծվել է շնորհիվ նրա,  
վոր առաջավոր կադիտալիստական պետություն  
ները կողոպտելով դադութային և թույլ ժողո-  
վուրդներին՝ հնարավորություն են տալիս բուր  
ժուադիալին այդ կողոպուտով ձեռք բերված գեր  
չահույթի հաշվին արտոնյալ վիճակի մեջ դնել  
և դրանով կաշառել պրոլետարիատի վերնախա-  
վերին, խաղաղ ժամանակում ապահովել նրանց  
մի տանելի քաղքենիական գոյություն և իր  
նոտ ծառայության վերցնել այդ խավերի ղեկա  
վարներին: Ուրտունիստներն ու սոցիալ - շո  
վինիստները, լինելով բուրժուադիալի ծառա-  
ներ, պրոլետարիատի ուղղակի դասակարգային  
թշնամիներն են, մանավանդ այժմ, յերբ նրանք  
կապիտալիստների հետ դաշնակցած, զինված  
ձեռքով ճնշում են պրոլետարիատի հեղափոխա-  
կան շարժումն ինչպես իրենց, նույնպես և ու-  
տար յերկիրներում:

Մյուս կողմից՝ սոցիալիզմի բուրժուական

610/10  
5.500  
1919



խեղաթյուրում և համասարապես բոլոր կայրի տալիստական յերկիրներում նկատվող «կենտրոններ» հոսանքը, վորը տոտանվում և սոցիալ-չո վինիստների և կոմունիստների միջև, պաշտպանելով միասնականութուն առաջինների հետ և վորձելով վերականգնել սնանկացած II Ինտերնացիոնալը: Պրոլետարիատի պայքարի դեկավարը՝ նրա ազատագրության համար՝ հանդիսանում և միայն նոր, III Կոմունիստական Ինտերնացիոնալը, վորի ջոկաններից մեկն և Համկե-ը: Այս Ինտերնացիոնալը փաստորեն ստեղծվել և նախկին սոցիալիստական կուսակցությունների իսկապես պրոլետարական տարրերից մի շարք յերկիրներում, մասնավանդ Գերմանիայում, կոմունիստական կուսակցությունների առաջացումով, իսկ ձևականորեն հիմնվել և իր առաջին համագումարում՝ 1919 թվի մարտին, Մոսկվայում: Կոմունիստական Ինտերնացիոնալը, վորը բոլոր յերկիրների պրոլետարական մասսաների մեջ ավելի ու ավելի համակրանք և ձեռք բերում, վոչ միայն իր անվանումով և վերադանում դեպի մարքսիզմ, այլ և իր ամբողջ գաղափարական - քաղաքական բովանդակությամբ, իր բոլոր գործողություններով իրագոր

ծում և Մարքսի հեղափոխական ուսմունքը՝ մաքրված բուրժուական - սոցիալիստական խեղաթյուրումներից:

Չարգացնելով պրոլետարական դիկտատուրայի կոնկրետ խնդիրները Ռուսաստանի վերաբերմամբ, վորի գլխավոր հատկանիշը բնակչության մանր - բուրժուական խավերի թվական գերազանցությունն և, Համկե-ը հետևյալ կերպով և վորոշում այդ նպատակները.

#### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՍՈՒՄ

1. Բուրժուական հանրապետությունը, նույն իսկ ամենադեմոկրատականը, վորը սրբագործվում և համաժողովրդական, համազգային կամ արտազատակարգային կամքի լրողունգներով, իրականում անխուսափելիորեն բուրժուազիայի դիկտատուրա յեր մնում, աշխատավորների ահադին մեծամասնությունը մի բուռ կապիտալիստների կողմից շահագործող և ճնշող մի մեքենա՝ շնորհիվ այն բանի, վոր գոյություն ուներ հողի և արտադրության այլ միջոցների մասնավոր սեփականություն: Դրան հակառակ, պրոլետարական կամ խորհրդային դեմոկրա-

տիան ամբողջ պետական ապարատի, տեղական  
և կենտրոնական, վարից — վեր, մշտական և մի  
ակ հիմքը դարձրեց հենց կապիտալիզմից ճնշ-  
ված դասակարգերի, պրոլետարների և չքավորա  
զույն գյուղացիները—կիսապրոլետարների, այ-  
սինքն բնակչութան ահազին մեծամասնութան  
մասսայական կազմակերպութիւնները: Դրանով  
խի խորհրդային պետութիւնն իրադործեց, ի-  
միջի ալլոց, անհամեմատ ավելի լայն չափով,  
քան վորեւէ այլ տեղ, տեղական և մարդային ինք  
նավարութիւնը, առանց վերելից նշանակվող վո  
րեվէ իշխանութիւն: Կուսակցութիւն խնդիրն է  
անդուլ աշխատանքով խկապես լիովին կենսա-  
գործել դեմոկրատիզմի այդ գերազույն տիպը,  
վորն իր կանոնավոր գործառնութիւն համար  
մասսաների կուլտուրականութիւն, կազմակերպ  
վածութիւն և ինքնագործունեյութիւն մակար-  
դակի մշտական բարձրացում է պահանջում:

2. Հակառակ բուրժուական դեմոկրատիայի,  
վոր թազցնում է բուրժուազիայի պետութիւն  
դասակարգային բնույթը, խորհրդային իշխա-  
նութիւնը բացորոշ կերպով ընդունում է ամեն  
մի պետութիւն անխուսափելի դասակարգային  
բնույթը, քանի բոլորովին չէ չբացել հասարա-

կութիւն բաժանումը դասակարգերի և դրա հետ  
միասին՝ ամեն մի պետական իշխանութիւն:  
Սորհրդային պետութիւնը, իր իսկ եյությամբ,  
նպատակ է դնում ճնշել շահագործողների դիմա  
գրութիւնը, և Սորհրդային սահմանադրութիւն  
նր կանգ չի առնում շահագործողներին քաղաքա  
կան իրավունքներից զրկելու առաջ՝ յեկակեա  
ունենալով այն, վոր ամեն մի ազատութիւն  
խարեյութիւն է, յեթէ հակասում է կապիտա-  
լի ճնշումից աշխատանքի ազատագրման: Անշեղ  
գլուխ բերելով շահագործողների դիմագրու-  
թիւն ճնշումը և դադափարականորեն պայքարե  
լով բուրժուական իրավունքների ու ազատու-  
թիւնների բացարձակ բնույթի վերաբերմամբ  
խորապես արմատացած նախապաշարումների  
դեմ՝ միաժամանակ պրոլետարիատի կուսակցու  
թիւն խնդիրն է պարզաբանել, վոր քաղաքա-  
կան իրավունքներից զրկելն ու ազատութիւն  
ինչպիսի սահմանափակում ել վոր լինի, դրանք  
անհրաժեշտ են բացառապես վորպես պայքարի  
ժամանակավոր միջոցներ՝ շահագործողների  
ձեռնարկած փորձերի դեմ՝ պաշտպանելու կամ  
վերականգնելու իրենց արտոնութիւնները: Այն  
քան, վորքան կվերանա մարդը մարդու միջոցով

չահագործելու որչեղարով հնարավորութիւնը, կվերանա նաև այդ ժամանակավոր միջոցների անհրաժեշտութիւնը, և կուսակցութիւնը կձգտի դրանք սահմանափակել և լիովին վերացնել:

3. Բուրժուական դեմոկրատիան սահմանափակվում էր ձևականորեն տարածելով հավասարապես բոլոր քաղաքացիների վրա քաղաքական իրավունքները և ազատութիւնները, ինչպիսիք են ժողովների, միութիւնների, մամուլի իրավունքները: Բայց իրականում բուրժուական դեմոկրատիայի ժամանակ ինչպես վարչական պարակտիկան, այնպես էլ գլխավորապես աշխատավորների անտեսական ստրկութիւնը, վերջիններև միշտ դնում էին այդ իրավունքներով ու ազատութիւններով քիչ թե շատ լայն կերպով ոգտվելու անհնարին դրութիւն մեջ:

Ընդհակառակը, պրոլետարական դեմոկրատիան իրավունքները և ազատութիւնները ձևականորեն հռչակելու փոխարեն դրանք փաստորեն տրամադրում էր ամենից առաջ և ամենից շատ բնակչութիւն հենց այն դասակարգերին, վորոնք ճնշվում էին կապիտալիզմից, այսինքն՝ պրոլետարիատին և գյուղացիութիւնը: Դրա

համար խորհրդային իշխանութիւնը խլում էր բուրժուակալից շինութիւններ, տպարաններ, թղթի պահեստներ և այլն՝ դնելով դրանք աշխատավորների ու նրանց կազմակերպութիւնների լիակատար անարինութիւն տակ:

Համկկ խնդիրն այն է, վոր աշխատավոր բրնակչութիւն է՛լ ավելի լայն մասսաներ ներգրավի դեմոկրատական իրավունքներից և ազատութիւններից ոգտվելու համար և ընդլայնի դրանիւթական հնարավորութիւնը:

4. Բուրժուական դեմոկրատիան դարերի ընթացքում ազդարարել է մարդկանց իրավահամարութիւն՝ անկախ սեռից, կրօնից, ցեղից և ազգութիւնից, բայց կապիտալիզմը վոչ մի տեղ թույլ չի տվել իրապես իրագործելու այդ իրավահամարութիւնը, իսկ իր իմպերիալիստական ստաղիայում չափազանց սրել է ցեղային և ազգային ճնշումը: Միայն շնորհիվ նրա, վոր խորհրդային իշխանութիւնն աշխատավորների իշխանութիւն է, նա կարողացավ մինչև վերջը և կյանքի բոլոր ասպարեզներում, առաջին անգամ աշխարհում, անցկացնել այդ իրավահամարութիւնը, կիս մինչև կնոջ անհավասարութիւն վերջին հետքերի վոչնչացումն ա-

մուսնական և առհասարակ ընտանեկան իրավունքի ասպարեղում: Ներկա մոմենտում կուսակցութեան խնդիրն է գերազանցապես զազափարական և դաստիարակչական աշխատանք կատարել՝ նախկին անհավասարութեան ու նախապաշարումների բոլոր հետքերը միանգամայն վոչնչացնելու համար, մանավանդ պրոլետարիատի և գյուղացիութեան հետամնաց խավերի մեջ:

Չսահմանափակվելով կանոնց ձևական իրավահավասարութեամբ՝ կուսակցութեանը ճրգտում է նրանց ազատել հնացած տնային տնտեսութեան նյութական ծանրութիւնից՝ փոխարինելով այդ տնտեսութեանը կոմունա - տներով, հասարակական ճաշարաններով, կենտրոնական բլացքատներով, մսուրներով և այլն:

5. Անհամեմատ ավելի մեծ հնարավորութիւն ընձեռելով աշխատավորական մասսաներին, քան բուրժուական դեմոկրատիայի և պատմանտարիզմի որով, վոր պատգամավորներ ընտրվեն և հետ կանչվեն բանվորների ու գյուղացիների համար ամենահեշտ և մատչելի յեղանակով՝ միաժամանակ խորհրդային իշխանութիւնը վոչնչացնում է պառլամենտարիզմի բա

ցասական կողմերը, մանավանդ որենդիր յեվ գործազիր իշխանութիւնների անջատումն իրարից, ներկայացուցչական հիմնարկների կտրվածութիւնը մասսաներից և այլն:

Սորհրդային պետութիւնը մոտեցնում է պետական ազարատը մասսաներին նաև նրանով, վոր ընտրական միավորը և պետութեան հիմնական բջիջը դառնում է վոչ թե տերիտորիալ շքը ջանը, այլ արտադրական միավորը (գործարան, ֆաբրիկա):

Կուսակցութեան խնդիրն այն է, վոր ամբողջ աշխատանքն այդ ուղղութեամբ կատարելով՝ իշխանութեան որդանների և աշխատավոր մասսաների հետագա մերձեցմանը ձգտի՝ այդ մասսաների կողմից դեմոկրատիզմը պրակտիկայում ավելի ևս խստութեամբ և ավելի ևս լրիվ իրագործելու հողի վրա՝ առանձնապես պաշտոնատար անձերի պատասխանատու և հաշվետու լինելը կիրառելու ճանապարհով:

6. Բուրժուական դեմոկրատիան, հակառակ իր ղեկավարացիաներին, գորքն ունևոր դասակարգերի գործիք է դարձրել, այն անջատելով աշխատավոր մասսաներից և այն հակադրելով դրանց, զինվորների համար քաղաքական իրա-

վունքներն իրազործելու հնարավորութիւնը վո  
չընչացնելով կամ դժվարացնելով, մինչդեռ Սոր  
հըրդային պետութիւնը ձուլում է իր որդաննե  
րում, Սորհուրդներում, բանխորհերին և զին-  
վորներին՝ նրանց իրավունքների հալսասարու-  
թիւն և նրանց շահերի միասնութիւն հիմունք-  
ներով: Կուսակցութեան խնդիրն է՝ պաշտպանել  
ու զարգացնել բանվորների և զինվորների այդ  
միասնութիւնը Սորհուրդներում, ամբացնելով  
զինված ուժի անքակտելի կապը պրոլետարիատի  
և կիսապրոլետարիատի կազմակերպութիւնների  
հետ:

7. Ամբողջ հեղափոխութեան մեջ քաղաքային  
արդյունաբերական պրոլետարիատը՝ վորպես  
աշխատավոր մասսաների ամենից շատ համա-  
կենարոնացած, միավորված, լուսավորված յեւ  
պայքարում կոփված մասը՝ ղեկավար դերն ար-  
տահայտել է թե՛ Սորհուրդների առաջացման  
մեջ և թե՛ զրանց զարգանալու և իշխանութեան  
որդաններ դառնալու ամբողջ ընթացքում: Մեր  
Սորհրդային սահմանադրութիւնն արտահայ-  
տել է այդ, վերապահելով արդյունաբերական  
պրոլետարիատին մի շարք արտոնութիւններ՝  
գյուղի համեմատաբար ավելի ցրելով մանր-բուր

ժուական մասսաների հանդէպ:

Համկկ, պարզաբանելով գյուղի սոցիալիստա  
կան կազմակերպման դժվարութիւնների հետ  
պատմականորեն կապված այդ արտոնութիւննե  
րի ժամանակավոր բնույթը, պետք է ձգտի ան-  
շեղ ու սխտեմատիկորեն ողտազործելու արդյու  
նաբերական պրոլետարիատի այդ գրութիւնը,  
վորպեսզի ի հակակշիւ նեղ-ցեխային և նեղ  
պրոֆեսիոնալ շահերի, վոր կապիտալիզմն եր  
սնուցում բանվորների մեջ, ավելի սերտ կեր-  
պով միացնի գյուղական պրոլետարների ու կի-  
սապրոլետարների, այլև միջին գյուղացիու-  
թեան յամենից ավելի հետամնաց ու ցրելով մասսա  
ներին առաջավոր բանվորների հետ:

8. Միայն պետութեան խորհրդային կազմ-  
ակերպման շնորհիվ պրոլետարիատի հեղափոխու  
թիւնը կարող եր միանգամից փշրել ու հիմնա  
հատակ անել պետութեան հին, բուրժուական,  
չինովնիկական և դատական ապարատը: Մա-  
կայն լայն մասսաների վոչ բավականաչափ բար  
ձր կուլտուրական մակարդակը, մասսաների  
կողմից պատասխանատու դիրքերում առաջ քաշ  
ված աշխատողների անհրաժեշտ հմտութեան բա  
ցակայութիւնը կառավարման գործում, ծանր

պայմաններում հին դպրոցի մասնագետներին արագութեամբ դործի հրավիրելու անհրաժեշտութիւնը և այն, վոր քաղաքային բանլորներին ամենազարգացած խալը վերցված և ղինվորական աշխատանքի, խորհրդային կարգերում բյուրոկրիտիզմի մասնակի վերածնունդ ևն առաջացրել:

Ամենավճուռական պայքար մղելով բյուրոկրատիզմի դեմ՝ Համկի այդ չարիքի լիակատար հաղթահարման համար պաշտպանում և հետեւյալ միջոցները.

1) Խորհրդի յուրաքանչյուր անդամին պարտադիր կերպով ներգրավել պետութեան կառավարման դժով վորոշ աշխատանք կատարելու:

2) Հանրապարար փոխել այդ աշխատանքներն այնպես, վոր նրանք աստիճանաբար ընդգրկեն կառավարման բոլոր ճյուղերը:

3) Ամբողջ աշխատավոր բնակչութեանը գրլ խովին աստիճանաբար ներգրավել պետութեան կառավարման աշխատանքի մեջ:

Այս բոլոր միջոցների լիակատար և բաղմանկողմանի կենսագործումը վորպես մի հետադաքայլ այն ուղիով, վորի վրա կանգնեց Փարիզի կոմունան, և կառավարման ֆունկցիաների պար

զացումը, աշխատավորների կուլտուրական մակարդակի բարձրացման զուգընթաց, տանում ևն դեպի պետական իշխանութեան վոչնչացումը:

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

9. Աղգային հարցում Համկի ղեկավարվում և հետեյալ դրույթներով.

1) Յերակես և ընդունվում տարբեր ազգութեանների պրոլետարների և կիսապրոլետարների մերձեցման քաղաքականութեանը՝ կարվածատերերի և բուրժուազիայի տապալման նպատակով միատեղ հեղափոխական պայքար մղելու համար:

2) Նպատակ ունենալով հաղթահարել ճընշված յերկիրների աշխատավոր մասսաների անվրստահութեանը դեպի այդ յերկիրները ճնշած պետութեանների պրոլետարիատը, անհրաժեշտ և առեն մի աղգային խմբակցութեան բոլոր յեվ յուրաքանչյուր տեսակի արտոնութեանների վոչընչացում, ազգութեանների լիակատար իրավահավասարութեան, պետականորեն անջատվելու

իրավունքի ճանաչում գաղութներին և անիրավա  
հավասար ազգութիւններին համար :

3) Նույն այդ նպատակով, վորպէս դեպի  
լիակատար միասնութիւն տանող անցողիկ ձե-  
վերից մեկը, կուսակցութիւնն առաջադրում է  
խորհրդային տիպով կազմակերպված պետու-  
թիւններին Ֆեդերատիվ միավորումը :

4) Այն հարցում, թե ո՞վ է ազգային անջատ  
ման կամքի կրողը, Համկի կանգնած է պատմա-  
կան - դասակարգային տեսակետի վրա, հաշիվ  
առնելով, թե իր պատմական դարգացման վո՛ր  
աստիճանի վրա յե կանգնած ավյալ ազգը՝ միջ  
նադարից դեպի բուրժուական դեմոկրա՞տիա,  
թե՞ բուրժուական դեմոկրատիայից դեպի խոր-  
հրդային կամ պրոլետարական դեմոկրատիա  
տանող ճանապարհի վրա :

Համենայն դեպս այն ազգերի պրոլետարիա-  
տի կողմից, վոր ճնշող ազգեր են յեղել, անհրա  
ժեշտ է, վոր առանձին զուշութիւն և առան-  
ձին ուշադրութիւն հանդէս բերվի ճնշված կամ  
անիրավահավասար ազգերի աշխատավոր մաս-  
սաների ազգային զգացմունքների մնացորդների  
վերաբերմամբ : Միայն այդպիսի քաղաքականու-  
թյամբ է հնարավոր պայմաններ ստեղծել մի-

ջազգային պրոլետարիատի ազգայնորէն ալլատե  
սակ տարրերի իրոք ամուր, հոժարակամ միու-  
թյան համար, ինչպէս այդ ցույց ավեց մի շարք  
ազգային Սորհրդային հանրապետութիւններին՝  
Սորհրդային Ռուսաստանի շուրջը միավորվելու  
փորձը :

## ՌԱԶՄԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

10. Ռազմական բնագոյառում կուսակցու-  
թյան խնդիրները վորոշվում են հետեյալ հիմ-  
նական դրույթներով .

1) Իմպերիալիզմի կազմալուծման և աճող  
քաղաքացիական պատերազմի դարաշրջանում  
հնարավոր չէ վոչ պահպանել հին բանակը, վոչ  
նորը կազմակերպել այսպէս կոչված ապադասա  
կարգային կամ համազգային հիմքերի վրա :  
Կարմիր բանակը՝ վորպէս պրոլետարական դիկ-  
տատուրայի գործիք՝ անհրաժեշտորէն պետք է  
ունենա բացորոշ դասակարգային բնույթ, այ-  
սինքն՝ կազմվի բացառապէս պրոլետարիատից և  
որան մոտիկ՝ գլուղացիության կիսապրոլետա-  
րական խավերից : Միայն դասակարգերի վոչըն  
չացման կապակցությամբ նմանորինակ դասա-

կարգային բանակը կվերածվի համաժողովրդական սոցիալիստական միլիցիայի:

2) Անհրաժեշտ է բոլոր պրոլետարներին ու կիսապրոլետարներին ամենալայն չափով սովորեցնել ռազմական գործը և համապատասխան առարկաների դասավանդութուն մտցնել դպրոցում:

3) Կարմիր բանակի ռազմական ուսուցման ու դաստիարակման աշխատանքը կատարվում է դասակարգային համախմբման և սոցիալիստական լուսավորության հիմունքով: Ուստի անհրաժեշտ են հուսալի և անձնվեր կոմունիստներին քաղաքական կոմիսարներ ռազմական պետերին կից, և կոմունիստական բջիջների կազմակերպում յուրաքանչյուր զորամասում՝ ներքին գաղափարական կապ և գիտակից զիսցիպլինա հաստատելու համար:

4) Ի հակադեպ հին բանակի կառուցվածքի անհրաժեշտ է՝ զուտ զորանոցային ուսուցման ըստ կարելույն կարճ ժամկետ, զորանոցների մերձեցում ռազմական և ռազմա - քաղաքական դպրոցների տիպին, զինվորական կազմակերպութունների ըստ կարելույն սերտ կապի հաստատում Փարբիկաների, գործարանների, արհես-

տակցական միությունների, գյուղական ջրավորության կազմակերպություններին հետ:

5) Յերիտասարդ հեղափոխական բանակին կարող է տրվել անհրաժեշտ կազմակերպական կապ և կայունութուն գիտակից բանվորների և գյուղացիների միջից յելած, առաջին նվազ թե կուզ ստորին, հրամանատարական կազմի ոգնությամբ միայն: Այդ պատճառով, ամենից ավելի ընդունակ, յեռանդուն և սոցիալիզմի գործին նվիրված զինվորներին հրամանատարական պաշտոնների համար պատրաստելը բանակի ստեղծման գործի կարևորագույն խնդիրներից մեկն է:

6) Անհրաժեշտ է ամենալայն կերպով ոգտագործել և կիրառել վերջին համաշխարհային պատերազմի ոպերատիվ և տեխնիկական փորձը: Այս կապակցությամբ անհրաժեշտ է բանակի կազմակերպման և նրա ոպերատիվ ղեկավարության գործի մեջ լայնորեն գրավել հին բանակի դպրոցն սնցած զինվորական մասնագետներին: Իր հերթին, աշխպիսի ներգրավման անհրաժեշտ պայմանն է բանակի քաղաքական ղեկավարությունը և հրամանատարական կազմի ամենակողմանի վերահսկողությունը կենտրոնացնել բանվոր դասակարգի ձեռքում:

7) Հրամանատարական կազմի ընտրականու  
թյան պահանջը, վոր ահադին սկզբունքային  
նշանակություն ուներ բուրժուական բանակի  
վերաբերմամբ, վորտեղ հրամանատարական կազ  
մը շոկվում և դաստիարակվում եր վորպես զին  
վորների և զինվորների միջոցով՝ աշխատավոր  
մասսաների դասակարգային հպատակեցման ու  
պարատ, միանգամայն կորցնում և իր սկզբուն-  
քային նշանակությունը դասակարգային բանվո-  
րական և գյուղացիական կարմիր բանակի վե-  
րաբերմամբ: Ընտրականության և նշանակուիու  
թյան հնարավոր համակցումը (КОМБИНАЦИЯ) հեղափոխական դասակարգային բանակին թելա  
զբվում և գործնական նկատառումներով և կախ  
ված և զորամասերի կազմավորման առկա մա-  
կարդակից, համախմբվածության աստիճանից,  
հրամանատարական կազմերի առկայությունից  
և այլն:

### ԴԱՏԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

11. Իր ձեռքն առնելով ամբողջ իշխանու-  
թյունը և առանց մնացորդի վերացնելով բուր-  
ժուական արիստոկրատիայի ուղղանները—նախ-

կին կառուցվածքի դատարանները՝ պրոլետարա  
կան դեմոկրատիան բուրժուական դեմոկրատիա  
յի «դատավորների ընտրականությունը ժողովրդ  
դի միջոցով» Ֆորմուլի փոխարեն առաջ և քաշել  
«դատավորների ընտրականությունն աշխատա-  
վորներից՝ միայն աշխատավորների միջոցով»  
դասակարգային լողուններ և այն կիրառել և դա-  
տարանի ամբողջ կազմակերպության մեջ, միա-  
ժամանակ հավասարեցնելով յերկու սեռերին  
ինչպես դատավորներ ընտրության, նույնպես և  
դատավորների պարտականությունները վարելու  
բոլոր իրավունքներում:

Պրոլետարիատի և չքավոր գյուղացիության  
ամենալայն մասսաներին դատավարության գոր-  
ծին ներգրավելու համար դատարանում մրտց-  
ված և մշտապես փոխարինվող ժամանակավոր  
դատավոր-ատենակալների մասնակցությունը,  
ցուցակները կազմելու գործին վերաբերվ մաս-  
սայական բանվորական կազմակերպություննե-  
րին, արհեստակցական միություններին և այլն:

Նախկին տարբեր կառուցվածքի և բազմա-  
թիվ ինստանցիաներ ունեցող դատարանների այն  
վերջ շարանի փոխարեն միասնական ժողովրդա  
կան դատարան ստեղծելով՝ խորհրդային իշխա-

նությունը պարզացրել և դատարանի կառուցվածքը՝ դատարանը բացարձակապես մատչելի դարձնելով բնակչությանը և վերացնելով դատավարության ամեն տեսակի քաջջուկները:

Վերացնելով տապալված կառավարությունների որենքները, Սորհրդային իշխանությունը հանձնարարել է Սորհուրդների ընտրած դատավորներին՝ իրագործել պրոլետարիատի կամքը, գործադրելով նրա ղեկընտնեըը, իսկ այդպիսիների բացակայության կամ թերի լինելու դեպքում՝ ղեկավարվել սոցիալիստական իրավադիտակցությամբ:

Այս ձևով կազմակերպված դատարանները՝ պատժի բնագավառում պատժի բնույթին արդեն արմատական փոփոխության են յենթարկել՝ լայն չափերով իրագործելով պայմանական դատապարտությունը, կիրառելով հասարակական պարսավանքը վորպես պատժի միջոց, փոխարինելով ազատագրկումը պարտադիր աշխատանքով՝ ազատության պահպանումով, փոխարինելով բանտերը դատախարակչական հաստատություններով և հնարավորություն տալով կիրառելու ընկերական դատարանների պրակտիկան:

Համկի, հետամուտ լինելով դատարանի ա-

պագա զարգացմանն այդ իսկ ճանապարհով, պետք է ձգտի, վորպեսզի դատավարական պարտականությունների կառավարման գործի մեջ գլխավոր դերով զբաղվի ամբողջ աշխատավոր բնակչությունը, և պատիժների սխտեմը վերջնականապես փոխարինվի դատախարակչական բնույթ կրող միջոցների սխտեմով:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ  
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

12. Ժողովրդական լուսավորության բնագավառում Համկի նպատակ է դնում գլուխ բերել 1917 թվի Հոկտեմբերյան հեղափոխությունից սկսած գործը՝ դպրոցը բուրժուազիայի դատախարային տիրապետության գործիքից դարձնել հասարակության դատախարային բաժանումը լիակատար վոչնչացնելու գործիք, հասարակության կոմունիստական վերասերման գործիք:

Պրոլետարիատի ղեկավարությունը չըջանում, այսինքն կոմունիզմի լիակատար իրագործումը հնարավոր դարձնող պայմանները պատրաստելու չըջանում, դպրոցը վոչ միայն պետք է լինի առհասարակ կոմունիզմի սկզբունքների հաղոր-

շիջը, այլև պրոլետարիատի դադափարական, կազմակերպական, դաստիարակչական ազդեցությունն աշխատավոր մասսաների կիսավրոլետարական և վոչ-պրոլետարական խավերին հազորդողը՝ կոմունիզմը վերջնականապես հաստատելու ընդունակ սերունդ դաստիարակելու նպատակով: Այդ ճանապարհին ներկայիս մոտավոր խնդիրն է՝ Խորհրդային իշխանության արդեն հաստատված դպրոցական ու լուսավորական գործի հետևյալ հիմքերի հետագա զարգացումը.

1) Զրի ու պարտադիր ընդհանուր ու պոլիտեխնիկական (թեորիապես և դործնականորեն արտադրության բոլոր գլխավոր ճյուղերին ծանոթացնող) կրթություն յերկու սեռի բոլոր յերիսաների համար մինչև 17 տարեկանը:

2) Ստեղծել նախադպրոցական հիմնարկությունները՝ մսուրների, պարտեզների, ոջախների ցանց և այլն, հասարակական դաստիարակությունը բարելավելու և կնոջ ազատագրելու նպատակով:

3) Լիովին իրագործել միասնական աշխատանքային դպրոցի սկզբունքները՝ կատարելով դասավանդումը մայրենի լեզվով, յերկու սեռի յերեխաներին միատեղ պոլիտեցնելով, անպայ-

ման աշխարհիկ, այսինքն վորևե կրոնական ազդեցությունից՝ ազատ, ուսուցման և հասարակական - արտադրողական աշխատանքի միջև սերտ կապ հաստատելով, կոմունիստական հասարակության համար բազմակողմանի զարգացում ունեցող անդամներ պատրաստելով:

4) Բոլոր սովորողներին պետության հաշվին մատակարարել սնունդ, հազուստ, վոտնաման, ուսումնական պիտույքներ:

5) Պատրաստել կոմունիզմի դադափարներով ներշնչված՝ լուսավորության աշխատողների նոր կազմեր:

6) Ներգրավել աշխատավոր բնակչությանն ակտիվ մասնակցություն ցույց տալու լուսավորության գործին («Ժողովրդական կրթության խորհուրդները» զարգացում, գրագետների մուրիկիցացիա և այլն):

7) Յույց տալ պետական բազմակողմանի սեկտորյուն բանվորների և գյուղացիների ինքնակրթության և ինքնազարգացման գործին (արտադպրոցական կրթության հաստատությունները ցանցի ստեղծում, գրադարաններ, հասակավորների դպրոց, Ժողովրդական տներ և համալսա-

րաններ, դասընթացներ, դասախոսություններ, կինեմատոգրաֆներ, ստուդիաներ և այլն) :

8) Լայնորեն զարգացնել արհեստակցական կրթությունը 17 տարեկանից բարձր հասակ ունեցողների համար, ընդհանուր պոլիտեխնիկական գիտելիքների հետ միասին :

9) Ֆոլոր սովորել ցանկացողների և առաջին հերթին բանվորների համար լայն կերպով մատչելի դարձնել բարձրագույն դպրոցի լսարանները, բարձրագույն դպրոցում դասավանդելու գործունեությունը պահել բոլոր նրանց, ովքեր կարող են այնտեղ ուսուցանել, թարմ գիտական ուժերի և կաֆեդրի միջև յեղած բոլոր և ամեն տեսակի արգելքները վերացնել : սովորողներին նյութապես ապահովել՝ պրոլետարներին և գյուղացիներին բարձրագույն դպրոցից ոգտվելու փաստական հնարավորություն տալու նպատակով :

10) Հավասարապես անհրաժեշտ է աշխատավորների համար բանալ և մատչելի դարձնել արվեստների ամբողջ գանձարանը, արվեստներ, վորենք ստեղծվել են նրանց աշխատանքի շահագործման հիման վրա ու մինչև այժմ բացառա-

պես չահագործողների տնորինություն տակ են գտնվել :

11) Զարգացնել կոմունիստական գաղափարների ամենալայն պրոպագանդը և այդ նպատակով ոգտագործել պետական իշխանություն ապարատը և միջոցները :

### ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

13. Կրոնի վերաբերմամբ ՀամկԿ չի բավականանում յեկեղեցու ու պետություն և դպրոցի ու յեկեղեցու արդեն իսկ որինահանացված բաժանումով, այսինքն այն ձեռնարկումներով, վորոնք բուրժուական դեմոկրատիան առաջադրում է իր ծրագրերի մեջ, սակայն աշխարհում վոր մի տեղ չի հասցրել մինչև վերջը, չնորհիվ կապիտալի և կրոնական պրոպագանդի միջև յեղած բազմատեսակ փաստական կապերի :

ՀամկԿ ղեկավարվում է այն համոզումով, թե մասսաների բովանդակ հասարակական-տնտեսական գործունեությունը պլանաչափության ու գիտակցականության իրագործումն է միայն, վոր կարող է լիովին մեռցնել կրոնական նախա-

պաշարումները: Կուսակցութիւնը ձգտում է լի  
ովին փշրել հարստահարող դասակարգերի և  
կրօնական պրոպագանդի կազմակերպութեան  
միջև յեղած կապը՝ նպաստելով աշխատավոր  
մասսաների փաստական ազատագրմանը կրօնա-  
կան նախապաշարմունքներին և կազմակերպելով  
ամենալայն դիտական-լուսավորական և հակա-  
կրօնական պրոպագանդ: Ընդամին անհրաժեշտ է  
հոգատարութեամբ խուսափել հավատացյալներին  
ղգացմունքների ամեն տեսակի վիրավորանքից,  
վորք տանում է միայն դեպի կրօնական մոլե-  
ւանդութեան ամբացում:

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Անշեղ շարունակել և ավարտել բուրժու-  
ադիայի սեփականազրկումը, արտադրութեան  
ու շրջանառութեան միջոցները Խորհրդային հան-  
րապետութեան, այսինքն բոլոր աշխատավորնե-  
րի ընդհանուր սեփականութիւնը դարձնելը, մի  
գործ, վորն սկսված է և իր գլխավոր ու հիմնա-  
կան մասերում արդեն վերջացած է:

2. Իբրև Խորհրդային իշխանութեան ամբողջ  
անտեսական քաղաքականութիւնը վորոշող, գրկ

խալոր և հիմնական խնդիր համարել յերկրի  
արտադրողական ուժերի բարձրացումը բոլոր մի  
ջոցներով: Նկատի ունենալով այն ծանրագույն  
քայքայվածութիւնը, վոր սպրում է յերկիրը,  
պետք է ամեն ինչ ստորագասվի բնակչութեան  
անհրաժեշտ միջոցների քանակն անմիջապես և  
լստ ամենայնի շատացնելու գործնական նպատա-  
կին: Այդ ուղղութեամբ ստացված գործնական  
հետեւանքներով պետք է չափվի ժողովրդական  
անտեսութեան հետ կապված խորհրդային յուրա-  
քանչյուր հիմնարկութեան աշխատանքի հաջողու-  
թիւնը:

Ընդամին անհրաժեշտ է առաջին հերթին ու-  
չադրութիւնը դարձնել հետեւյալի վրա.

3. Իմպերիալիստական անտեսութեան կազ-  
մալուծումը խորհրդային շինարարութեան առա-  
ջին ժամանակաշրջանին ժառանգութիւնէ թողել  
վորոշ քոսոսյութիւնը արտադրութեան կազմա-  
կերպման և կառավարման մեջ: Այլեւի ստիպո-  
ղականորեն և առաջ քաշվում, իբրև արմատա-  
կան խնդիրներից մեկը, յերկրի ամբողջ անտե-  
սական գործունէութեան առավելագույն միավո-  
րումը մի համապետական պլանով: արտադրու-  
թեան առավել կենտրոնացումը՝ ըստ առանձին  
ճյուղերի ու ճյուղերի խմբերի այն միավորելու

և լավագույն արտադրական միավորների մեջ  
այն կենտրոնացնելու իմաստով, այլև տնտեսա-  
կան խնդիրներն արագ իրագործելու իմաստով.  
արտադրական ամբողջ ասպարատի առավել կար-  
գավորումը, յերկրի բոլոր նյութական միջոցնե-  
րի նպատակահարմար և խնայողաբար ոգտադոր-  
ծումը:

Ընդամին անհրաժեշտ է հոգ տանել մյուս  
ժողովուրդների հետ տնտեսական աշխատակցու-  
թյունը և քաղաքական կապերն ընդլայնելու մա-  
սին, միաժամանակ ձգտելով միասնական տնտե-  
սական պլան սահմանել այդ ժողովուրդներից նը-  
րանց հետ, վորոնք արդեն խորհրդային կարգե-  
րի յեն անցել:

4. Մանր և տնայնագործական արդյունաբե-  
րության նկատմամբ անհրաժեշտ է լայն կեր-  
պով ոգտադործել այն՝ տնայնագործներին պե-  
տական պատվերներ տալու միջոցով. տնայնա-  
գործական և մանր արդյունաբերությունը մըտց  
նել հումքի և վառելանյութի մատակարարման  
ընդհանուր պլանի մեջ, ինչպես նաև Ֆինանսա-  
կան աջակցություն ցույց տալ նրան, առանձին  
տնայնագործներին, տնայնագործական արտելնե-  
րը, արտադրական կոոպերատիվները և մանր

ձեռնարկություններն ավելի խոշոր արտադրա-  
կան և արդյունաբերական միավորների մեջ մի-  
ավորելու պայմանով. նման միավորումներին  
խրախուսել նրանց տնտեսական առավելություն  
ներ տալու միջոցով, վորոնք, մյուս միջոցների  
հետ մեկտեղ, նպատակ ունեն կասեցնել տնայ-  
նագործներին՝ մանր արդյունաբերողներ դառնա-  
լու ձգտումը և ստեղծել արտադրության՝ այդ  
հետամնաց ձևերի անհիվանդադին փոխանցումն  
ավելի բարձր՝ խոշոր մեքենայացված ինդուստ-  
րիայի:

5. Հանրայնացրած արդյունաբերության կազ-  
մակերպական ապարատն առաջին հերթին պետք  
է հենվի արհեստակցական միությունների վրա:  
Նրանք պետք է միշտ ավելի և ավելի ազատա-  
զրվեն ցեսային սահմանափակությունից ու դաս-  
նան խոշոր արտադրական միավորումներ, վո-  
րոնք ընդգրկում են արտադրության տվյալ ճյու-  
ղի աշխատավորների մեծամասնությունը, իսկ  
առտիճանաբար նաև բոլորին գլխովին:

Սորհրդային հանրապետության որենքների  
և հաստատված պրակտիկայի համաձայն արդեն,  
մասնակցություն ունենալով արդյունաբերու-  
թյան կառավարման բոլոր տեղական և կենտրո-

նական օրգաններում՝ հետագայում արհեստակ-  
ցական միությունները պետք է փաստորեն ի-  
րենց ձեռքում կենտրոնացնեն ամբողջ ժողովրդա-  
կան տնտեսության, վերպես միասնական տնտե-  
սական ամբողջության, բովանդակ կառավարու-  
մը: Այդպիսով՝ ապահովելով կենտրոնական պե-  
տական կառավարման, ժողովրդական տնտեսու-  
թյան և աշխատավորության լայն մասսաների  
անբախտելի կապը՝ արհեստակցական միություն-  
ները պետք է վերջիններիս ամենալայն չափով  
ներգրավեն տնտեսավարության անմիջական աշ-  
խատանքի մեջ: Միաժամանակ արհեստակցական  
միությունների մասնակցությունը տնտեսավար-  
ությանը և նրանց միջոցով լայն մասսաների գը-  
րավումն այդ գործին՝ խորհրդային իշխանու-  
թյան տնտեսական ապարատի բյուրոկրատաց-  
ման դեմ պայքարելու գլխավոր միջոցն է և հնա-  
րավորություն է տալիս իրոք ժողովրդական վե-  
րահսկողություն հաստատելու արտադրության  
արդյունքների վրա:

6. Ժողովրդական տնտեսության պլանաչափ  
վարչացման նպատակով պետության մեջ յեղած  
ամբողջ աշխատանքային ուժի անհրաժեշտ առա-  
վելագույն օգտագործումը, նրա ճիշտ բաշխումը:

ու վերաբաշխումը ինչպես տարբեր տերիտորիալ  
մարզերի, նույնպես և ժողովրդական տնտեսու-  
թյան տարբեր ճյուղերի միջև, պետք է կազմի  
Խորհրդային իշխանության տնտեսական քաղա-  
քանակության մոտակա խնդիրը, քաղաքականու-  
թյուն, վորը կարող է իրագործվել նրա կող-  
մից՝ միայն սերտ կապ պահպանելով արհես-  
տակցական միությունների հետ: Վերջ հասա-  
րակական աշխատանքներ կատարելու համար ար-  
հեստակցական միությունների մասնակցու-  
թյամբ ամբողջ աշխատունակ բնակչության գը-  
խովին մոբիլիզացիան Խորհրդային իշխանու-  
թյան կողմից պետք է անհամեմատ լայն ու ա-  
վելի սխտեմատիկորեն կիրառվի, քան այդ ար-  
վել է մինչև հիմա:

7. Աշխատանքի կապիտալիստական կազմա-  
կերպման անկման պայմաններում յերկրի արտա-  
դրյալական ուժերը կարող են վերականգնվել ու  
զարգանալ, իսկ արտադրության սոցիալիստա-  
կան յեղանակը կարող է ամրանալ միայն աշխա-  
տավորների ընկերային կարգապահության, նը-  
րանց առավելագույն ինքնագործունեյության,  
պատասխանատւության գիտակցության և աշխա-  
տանքի արդյունավետության նկատմամբ փոխա-

դարձ ամենախիստ վերահսկողութիւն սահմանելու հիման վրա :

Այդ նպատակին հասնելը համառ, սիստեմատիկ աշխատանք է պահանջում մասսաների վերադաստիարակման դործում, վորը դյուրացված է այժմ հենց շնորհիվ նրա, վոր մասսաները գործնականում տեսնում են կապիտալիստին, կալվածատիրոջը և վաճառականին հեռացնելը և սեփական պրակտիկայի փորձով այն համոզման են գալիս, վոր իրենց բարեկեցութեան մակարդակը շարժառայես իրենց սեփական աշխատանքի կարգապահութիւնից է կախված :

Նոր սոցիալիստական կարգապահութեան ըստեղծման այս աշխատանքում գլխավոր դերն ընկնում է արհեստակցական միութիւնների վրա : Ղեկընկններս, հրաժարվելով հին շարքներից, այդ նպատակն ոգտագործելու համար պետք է գործնականում կիրառեն ու փորձեն զանազան տեսակի միջոցառումներ, ինչպես, որինակ, սահմանել հաշվետվութիւն, արտադրանքի նորմաներ, սահմանել պատասխանատվութիւն հատուկ ընկերական բանվորական զատարանների առաջ և այլն :

8. Արտադրողական ուժերի զարգացման նույն

խնդիրը սահանջում է անհապաղ, լայնորեն ու բազմակողմանի ոգտագործել կապիտալիզմի մեզ ժառանգութիւն թողած՝ դիտութեան և տեխնիկայի մասնագետներին, շնայած այն բանին, վոր նրանք շատ դեպքերում անխուսափելիորեն համակցված են բուրժուական աշխարհայեցողութեամբ ու սովորութիւններով : Կուսակցութիւնը գտնում է, վոր վերջացել է այս խափի հետ սուր պայքարի շրջանը, վորն առաջ էր յեկել նրա կողմից կազմակերպված սարտատժի շնորհիվ, քանի վոր այդ սարտատժն ընդհանուր առմամբ խորտակված է : Մերտ կապ պահպանելով արհեստակցական միավորումների հետ, կուսակցութիւնը պետք է առաջ տանի իր նախկին դիժը. մի կողմից ամենափոքր քաղաքական ղեկումն իսկ չանել ավյալ բուրժուական խափին և անխնա ճնշել նրա հակահեղափոխական ամեն մի վտանգութիւնը, իսկ մյուս կողմից՝ նույնքան անխնա կռվել այն կեղծ-արմատական, բայց իրոք տգետ մեծամտութեան դեմ, թէ իրր աշխատավորներն ի վիճակի յեն հաղթահարել կապիտալիզմն ու բուրժուական կարգերը՝ չուսանելով բուրժուական մասնագետներից, չոգտագործելով նրանց, չանցնելով նը-

րանց հետ միասին աշխատանքի յերկարատե  
դպրոց:

Ձգտելով ամեն մի աշխատանքի վարձատրու  
թյան հավասարության ու լիակատար կոմունիզ  
մի, Սորհրդային իշխանությունը չի կարող իր  
խնդիրը համարել այդ հավասարության անհա-  
պաղ իրազործումը ավյալ մոմենտում, յերբ կա  
պիտալիզմից կոմունիզմին անցնելու միայն ա-  
ռաջին քայլերն են արվում: Ուստի անհրաժեշտ  
է մի վորոշ ժամանակ դեռ պահպանել մասնա-  
գետները ավելի բարձր վարձատրությունը, վոր  
պետքի նրանք կարողանան աշխատել վոչ թե  
վատ, այլ ավելի լավ, քան առաջ, և հենց նույն  
նպատակի համար չի կարելի հրաժարվել պրե-  
միաների սխտեմից՝ ամենից ավելի հաջող և մա  
նավանդ կազմակերպչական աշխատանքի հա-  
մար:

Հավասարապես անհրաժեշտ է բուրժուական  
մասնագետներին դնել ընկերային ընդհանուր աշ  
խատանքի պայմանների մեջ՝ ձեռք-ձեռքի տված  
չարքային բանվորները մասսայի հետ, բանվոր  
ների, վորոնք ղեկավարվում են գիտակից կո-  
մունիստների կողմից, և դրանով նպաստել, վոր  
կապիտալիզմի կողմից իրարից բաժանված Ֆի-

գիկական ու մտավոր աշխատողները փոխադարձ-  
ձայրար հասկանան և մոտենան իրար:

9. Սորհրդային իշխանությունն արդեն մի  
չարք միջոցներ է ձեռնարկել, վորոնք նպատակ  
ունեն դարգացնել գիտությունը և այն մոտեց-  
նել արտադրությանը. ստեղծել նոր գիտական-  
զործնական ինստիտուտների, լաբորատորիանե-  
րի, հետազոտական կայանների, նոր տեխնիկա-  
կան մեթոդները, կատարելագործումները և  
դյուտերն ստուգելու փորձնական արտադրու-  
թյունների մի ամբողջ ցանց, բոլոր գիտական  
ուժերի ու միջոցների հաշվառում և այլն: Համ  
կկ, պաշտպանելով բոլոր միջոցները՝ ձգտում է  
նրանց հետագա զարգացմանը և գիտական աշ-  
խատանքի համար նպաստավոր պայմաններ  
ստեղծելուն արտադրողական ուժերի բարձրաց-  
ման կապակցությամբ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

10. Սորհրդային իշխանությունը, իրագոր-  
ծելով հողի մասնավոր սեփականատիրության լի  
ակատար վերացումը՝ անցել է արդեն մի շարք  
միջոցների կենսագործմանը, վորոնք հետապըն-

դում են խոշոր սոցիալիստական հողագործու-  
թյան կազմակերպումը:

Այդ միջոցներից ամենակարևորներն են.

1) խորհրդային տնտեսութունների, այսին-  
քը՝ խոշոր սոցիալիստական տնտեսութունների  
կազմակերպումը. 2) աջակցութուն ցույց տալ  
հողը հասարակականորեն մշակող միութուննե-  
րին, այլև ընկերութուններին. 3) կազմակեր-  
պել պետական ցանքս բոլոր չցանված հողերի,  
ում ել նրանք պատկանելիս լինեն. 4) բոլոր ազ-  
րոնոմիական ուժերի պետական մորիլլիզացիա՝  
գյուղատնտեսական կուլտուրան բարձրացնելու  
ուղղությամբ յեռանդուն միջոցների դիմելու հա-  
մար. 5) աջակցութուն ցույց տալ գյուղատնտե-  
սական կոմունաներին, իբրև հողագործների մի-  
անգամայն հոժարակամ միութունների՝ խոշոր  
ընդհանուր տնտեսութուն վարելու համար:

Բոլոր այդ միջոցները դիտելով իբրև գյու-  
ղատնտեսական աշխատանքի արտադրողականու-  
թյան բացարձակ անհրաժեշտ բարձրացման մի-  
ակ ճանապարհ՝ Համկի ձգտում է ըստ կարե-  
լույն լիակատար կերպով կենսագործել այդ մի-  
ջոցները, տարածել նրանց յերկրի ամբողջ հետա-

մնաց շրջաններում և նույն ուղղությամբ հետա-  
դա քայլերի:

Համկի առանձնապես պաշտպանում է.

1) գյուղատնտեսական միջերջների վերամը-  
շակմամբ զբաղված գյուղատնտեսական կոոպե-  
րացիայի ամեն ձևի պետական ոժանդակությու-  
նը.

2) լայն կերպով կիրառված հողի մելիորա-  
ցիայի սխտեմը.

3) չքալոր և միջակ գյուղացիությանը ին-  
վենտարով լայն ու պլանաչափ մատակարարելը  
վարձատու կայանների միջոցով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, վոր մա-  
նրը գյուղացիական տնտեսութունը դեռ յեր-  
կար պիտի գոյութուն ունենա, Համկի ձգտում  
է իրագործել մի շարք միջոցներ, վորոնց նպա-  
տակն է բարձրացնել գյուղացիական տնտեսու-  
թյան արտադրողականութունը: Այդպիսի մի-  
ջոցներ են հանդիսանում՝ 1) գյուղացիական հու-  
ողտագործման կարգավորումը (հողերի ցրվա-  
ծության, հեռավորության և այլն վերացումը). 2) գյուղացիներին լավորակ հացահատիկներ և  
արհեստական սարարտանյութեր մատակարարե-  
լը. 3) գյուղացիական անասունների տեսակի լա

վացումը․ 4) ազրոնոմիական գիտելիքներ տարածելը․ 5) գյուղացիներին ազրոնոմիական ոգնություն ցույց տալը․ 6) գյուղացիներին ինվենտարի նորոգումը խորհրդային նորոգող արհեստանոցներում․ 7) վարձատու կետերի, փորձակայանների, ցուցադաշտերի կազմակերպումը․ 8) գյուղացիական հոգերի մեղիորացիան։

11. Նկատի ունենալով, վոք հակազրությունը քաղաքի և գյուղի միջև գյուղի անտեսական և կուլտուրական հետամնացության ամենախորհիմքերից մեկն է, իսկ այնքան խոր ճգնաժամի դարաշրջանում, ինչպիսին է ներկայիսը, թե՛ քաղաքը և թե՛ գյուղն ալլասերման և կործանման անմիջական վտանգի առաջ է դնում, ՀամԿԿ այդ հակազրության վոչնչացման մեջ է տեսնում կոմունիստական շինարարության հիմնական խնդիրներից մեկը և, ընդհանուր միջոցների շարքին, անհրաժեշտ է գտնում՝ արդյունաբերական բանվորներին լայնորեն և պլանաչափ գրավել կոմունիստական շինարարության հոդագործության մեջ, անհրաժեշտ է համարում այդ նպատակներով Խորհրդային իշխանության կողմից արդեն հիմնված համապետական «Բանվորա-

կան ոժանդակող կոմիտեյի» գործունեյության դարգացումը և այլն։

12. Գյուղում կատարելիք իր ամբողջ աշխատանքում ՀամԿԿ առաջվա պես հենվում է նրա պրոլետարական և կիսապրոլետարական խավերի վրա, կազմակերպում է նախ և առաջ նրանց իբրև ինքնուրույն ուժ, ստեղծելով գյուղում կուսակցական բջիջներ, չքավորության կազմակերպություններ, գյուղի պրոլետարների ու կիսապրոլետարների հատուկ տիպի արհեստակցական միություններ և այլն, ամեն կերպ նրանց մերձեցնելով քաղաքային պրոլետարիատին և պոկելով նրանց գյուղական բուրժուազիայի ու մանր սեյակիստիական շահերի ազդեցությունից։

Կուլակների, գյուղական բուրժուազիայի նը կատամար ՀամԿԿ քաղաքականությունն է՝ վըճուական պայքար մղել նրանց շահագործողական վոտնձգությունների դեմ, ճնշել նրանց դիմադրությունը խորհրդային քաղաքականությանը։

Միջակ գյուղացիության նկատմամբ ՀամԿԿ քաղաքականությունն է՝ նրան աստիճանաբար և պլանաչափ կերպով սոցիալիստական շինարարության մեջ ներգրավել։ Կուսակցությունն իր խնդիրն է համարում անջատել նրան կուլակնե-

րից, նրան դրավել բանվոր դասակարգի կողմը՝  
ցույց տալով ուշադիր վերաբերմունք դեպի նը-  
րա կարիքները, պայքարելով նրա հետամնացու-  
թյան դեմ զաղափարական ներգործության մի-  
ջոցներով, վոչ յերբեք ճնշման միջոցներով,  
ձգտելով ամեն դեպքում, վորտեղ նրա կենսա-  
կան շահերն են շոշափվել, գործնական համա-  
ձայնության դալ նրա հետ, զիճումներ անելով  
նրան սոցիալիստական վերակառուցումների կի-  
րառման յեղանակները վորոշելու մեջ:

### ԲԱՇԽՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

13. Բաշխման բնագավառում, ներկայումս  
Խորհրդային իշխանության խնդիրն է՝ անշեղ  
կերպով շարունակել առևտրի փոխարինումը մը  
թերքների պլանաչափ, համապետական մասշտա-  
բով կազմակերպված բաշխումով: Նպատակ է  
հանդիսանում ամբողջ բնակչութունը կազմա-  
կերպել սպառողական կոմունաների միասնական  
ցանցում, վորոնք ամենամեծ արագությամբ,  
պլանաչափությամբ, խնայողությամբ և աշխա-  
տանքի նվազագույն ծախսումով պետք է կարո-  
ղանան բաշխել բոլոր անհրաժեշտ միջերգները՝

խստորեն կենտրոնացնելով ամբողջ բաշխման ա-  
պարատը:

Սպառողական կոմունաների և նրանց միա-  
վորումների հիմքում պետք է դրված լինի դոյու-  
թյուն ունեցող համաքաղաքացիական և բանվո-  
րական կոոպերացիան, վոր սպառողների ամե-  
նախոշոր կազմակերպությունն է և կապիտալիզ-  
մի պատմությամբ ամենից շատ նախապատ-  
րաստված՝ բաշխման մասսայական ապարատն  
է:

Սկզբունքորեն միակ ճիշտը համարելով կոոպե-  
րատիվ ապարատի հետագա կոմունիստական այդ-  
տեսակ զարգացումը և վոչ թե այն մի կողմ  
նետելը, ՀամԿԿ սիստեմատիկորեն պետք է շա-  
րունակի իր քաղաքականությունը. պետք է  
պարտավորեցնի կուսակցության բոլոր անդամ  
ներին աշխատել կոոպերատիվներում, վերջիննե-  
րիս, նաև արհեստակցական միությունների ոգնու-  
թյամբ, կոմունիստական վոգով դեկավարի,  
զարգացնի կոոպերատիվում միավորված աշխա-  
տավոր բնակչության ինքնագործունեյությունը  
և կարգապահությունը, հասնի այն բանին, վոր  
ամբողջ բնակչութունն ընդգրկվի կոոպերատիվ  
չերում, և վորպեսզի այդ կոոպերատիվները

ձուլվեն մի միասնական, վերելք վար ամբողջ  
Խորհ. հանրապետութիւնն ընդգրկող կոոպե-  
րատիվի մեջ, վերջապես, և ամենազխալորը,  
պրոլետարիատի գերակշռող ազդեցութիւնը աշ  
խատավորները մնացած խավերի վրա մշտապես  
ապահովված լինի և վոր ամենուրեք դործնակա  
նում փորձվեն տարբեր միջոցներ, վորոնք հեշ-  
տացնում են և իրագործում հին կապիտալիստա  
կան տիպի մանր - բուրժուական կոոպերատիվ-  
ների փոխանցումը պրոլետարների և կիսապրո-  
լետարների կողմից ղեկավարվող սպառողական  
կոմունաների:

### ՓՈՂԱՅԻՆ ՅԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

14. Սուսափելով Փարիզի կոմունայի սխալնե  
րից՝ Խորհրդային իշխանութիւնը Ռուսաստա-  
նում միանգամից զրավեց Պետական բանկը, ա-  
պա անցավ մասնավոր առևտրական բանկերի  
ազգայնացման, ձեռնարկեց ազգայնացրած բան  
կերը, խնայողական գանձարկղները և գանձառը  
ները Պետական բանկի հետ միավորելը, այդպի  
սով ստեղծելով Խորհրդային հանրապետութիւն

միասնական ժողովրդական բանկի կմախքը յեվ  
բանկը Ֆինանսական կապիտալի տիրապետու-  
թյան տնտեսական կենտրոնից ու շահագործող-  
ների քաղաքական տիրապետութիւնն դործիքից  
վերածեց բանվորական իշխանութիւնն դործիքի  
ու տնտեսական հեղաշրջման լծակի: Նպատակ  
ղնելով Խորհրդային իշխանութիւնն սկսած դոր-  
ծի հետագա հետեողական ավարտումը, Համկի  
առաջին հերթին առաջ է քաշում հետևալ  
սկզբունքները.

1) ամբողջ բանկային դործի մոնոպոլիզա-  
ցիան խորհրդային պետութիւնն ձեռքում.

2) բանկային ոպերացիաների արմատական  
փոփոխումն ու պարզացումը՝ բանկային ապարա  
տը Խորհրդային հանրապետութիւնն միակերպ  
հաշվառման և ընդհանուր հաշվապահութիւնն ա  
պարատի վերածելու ճանապարհով: Պլանաչափ  
հասարակական տնտեսութիւնն կազմակերպ-  
մամբ այդ կհասցնի բանկի վոչնչացմանը և  
այն կվերածի կոմունիստական հասարակութիւնն  
կենտրոնական հաշվապահութիւնն:

15. Կապիտալիզմից կոմունիզմին անցնելու  
առաջին շրջանում, քանի ղեռ լիովին չի կազմա  
կերպված մթերքների կոմունիստական արտա-

դրությունը և բաշխումը, փողի վոչնչացումը հնարավոր չէ: Այդպիսի դրության ժամանակ բնակչութեան բուրժուական տարրերը շարունակում են ոգտագործել իբրև մասնավոր սեփականութիւն մնացած դրամանիշները, սպեկուլացիայի, հարստանալու և աշխատավորներին կողոպտելու նպատակով: Հենվելով բանկերի ազգայնացման վրա, ՀամկԿ ձգտում է կիրառել մի շարք միջոցներ, վորոնք ընդլայնում են անփող հաշվարկի բնագավառն ու նախապատրաստում փողերի վոչնչացումը, այն է՝ փողերի պարտագիր պահումը ժողովրդական բանկում, բյուջետային գրքույկների գործադրումը, փողի փոխարինումը չեկերով, մթերքներ ստանալու իրավունք սովող կարճատև տոմսերով և այլն:

### ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

16. Կապիտալիստներից խլած արտադրական միջոցների սկսված հանրայնացման դարաշրջանում պետական իշխանութիւնը դադարում է լինել մակարույժ ապարատ, վոր կանգնած է արտադրական պրոցեսից հեռու. նա սկսում է վերածվել մի կազմակերպութեան, վոր անմիջակա

նորեն կատարում է յերկրի տնտեսութեան կառավարման Փուկցիան, և նույն չափով ել պետական բյուջեն դառնում է ամբողջ ժողովրդական տնտեսութեան բյուջե:

Այս պայմաններում յեկամուտների և ծախսերի հաշվեկշիռն իրագործելի յե միայն արդյունքների պլանաչափ պետական արտադրութեան յեվ բաշխման ճիշտ կազմակերպման դեպքում: Իսկ ինչ վերաբերում է անմիջական պետական ծախքերը ծածկելուն անցողիկ եպոխայում, ապա ՀամկԿ պետք է պաշտպանի սոցիալիստական հեղափոխութեան առաջին շրջանում կապիտալիստների վրա դրած պատմականորեն անհրաժեշտ և որինավոր կոնտրիբուցիաների սխտեմից պրոգրեսիվ յեկամտային և գույքային հարկի անցնելը: Իսկ վորչափ վոր այդ հարկն ինքը վերացնում է իրեն, շնորհիվ ունևոր դասակարգերին լայն կերպով եքսպրոպրեացիայի յենթարկելուն, պետական ծախքերի ծածկումը պետք է հանգչի պետական մենաշնորհներից ստացած յեկամուտների մի մասի անմիջական շրջանառութեան վրա իբրև պետական յեկամուտ:

17. Զգտելով լուծել պատերազմի ժամանակաշրջանում առանձնապես սրված բնակարանային հարցը՝ Սորհրդային իշխանութունը լիովին խլել է կապիտալիստական տնտեսերի բոլոր տները և հանձնել քաղաքային խորհուրդն ինն. կատարել է ծայրամասերի բանվորների մասսաների տեղափոխութուն բուրժուական տները. այդ տներից լավագույնները տվել է բանվորական կազմակերպութուններին, պետութեան հաշիւին առնելով այդ շինութունների պահպանութունը. ձեռնարկել է բանվորական ընտանիքներին կահկարասիներով ապահովելուն և այլն:

Ընթանալով վերահիշյալ ուղիով և բնավ չըշտափելով վոչ - կապիտալիստական տնտեսութեան շահերը՝ Համկի խնդիրն այն է, վոր ամբողջ ուժով ձգտի բարելավել աշխատավոր մասսաների բնակարանային պայմանները, այն է՝ վերացնել հին քաղաքամասերի բնակչութեան կուտակումը և հակառողջապահականութունը, վոչնչացնել անպետք բնակարանները, վերաշինել հները, շինել նորերը, վորոնք համապար-

տախանում են բանվորական մասսաների գոյնէթյան նոր պայմաններին, տեղափորել աշխատավորներին նպատակահարմար կերպով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումով առաջին անգամն է, վոր հնարավորութուն է ստեղծվում լիովին իրագործելու սոցիալիստական կուսակցութունների մինիմում - ծրագիրն աշխատանքի պաշտպանութեան բնագավառում:

Սորհրդային իշխանութունն որենսդրական կարգով անց է կացրել և «Աշխատանքի որենքների կողեկքսում» հաստատել է բոլոր աշխատավորների համար 8-ժամյա բանվորական օր, իբրև վ աշխատանքի առավելագույն ժամանակ, ընդամին՝ 18 տարեկան հասակին չհասած անձերի, արտադրութեան առանձնապես վնասակար ճյուղերում, այլ և հողի տակ զբաղված լեռնարդյունարբերական բանվորների բանվորական օրը 6 ժամից չպետք է անցնի. բոլոր աշխատավորներ

րի համար շարաթական 42-ժամյա անընդհատ հանգիստ. արտաժամյա աշխատանքների արգելում՝ վորպես ընդհանուր կանոն. մանուկների և մինչև 16 տարեկան անչափահասների աշխատանքից ոգտվելու արգելում. գիշերային աշխատանքի և արտադրության առանձնապես վնասակար ճյուղերի աշխատանքի, այլև արտաժամյա աշխատանքի արգելում՝ իգական սեռին պատկանող բոլոր անձերի և 18 տարեկանը չհասած արական սեռի անձերի համար. կանանց աշխատանքից ազատելը 8 շաբաթ ծննդաբերությունից առաջ և 8 շաբաթ ծննդաբերությունից հետո՝ պահպանելով լրիվ աշխատավարձն այդ ամբողջ ժամանակամիջոցում և ցույց տալով բժշկական ու դեղային ձրի ոգնություն. յուրաքանչյուր յերեք ժամը մեկ անդամ բանվորուհիներին հատկացնել առնվազը կես ժամ յերեսային կերակրելու համար և տալ լրացուցիչ նւպաստ կերակրող մայրերին. արհեստակցական միությունների խորհուրդների կողմից ընտրված աշխատանքի տեսչություն և սանիտարական տեսչություն:

Խորհրդային իշխանությունն որենսդրական կարգով անց է կացրել ուրիշի աշխատանքը չչա

հագործող բոլոր աշխատավորների լիակատար սոցիալական ապահովագրություն աշխատունակության ամեն տեսակի կորստից և աշխարհումըս առաջին անգամ ապահովագրություն դործագրկությունից՝ ի հաշիվ վարձողների և պետության, ապահովագրվածների լիակատար ինքնավարությամբ և արհեստակցական միությունների լայն մասնակցությամբ:

Գեռ ավելին. Խորհրդային իշխանությունը վորոշ տեսակետից ծրագիր – մինիմումից դենն է անցել և նույն «Աշխատանքի որենքների կողեքսում» սահմանել է բանվորական կազմակերպությունների մասնակցություն վարձելու և արձակելու հարցերը լուծելու մեջ. մի տարուց վոչ պակաս անդադար աշխատած բոլոր աշխատավորներին միամսյա արձակուրդ՝ ոռճկի պահպանումով. աշխատավարձի պետական կանոնավորում՝ արհեստակցական միությունների մշակած տարիքների հիման վրա. վորոշ որդաններ, այն է՝ խորհուրդներին և արհեստակցական միություններին կից բաշխման և հաշվառման բաժիններ, վորոնք պարտավոր են գործ տալ գործազուրկներին:

Սակայն պատերազմի առաջացրած ծայրահեղ

տոյէրածութիւնը և համաշխարհային իմպերիալիզմի գրոհը հարկադրել են Սորհրդային իշխանութեանը հետեւյալ շեղումներն անել. թույլ տալ արտաժամայն աշխատանք վերադառնալ քայտիկ դէպքերում, սահմանափակելով այն տարեկան 50 որով. թույլատրել 14-ից յինչև 16 տարեկան անչափահասներին աշխատանքը, սահմանափակելով նրանց աշխատանքի որը չորս ժամով. միամսյա արձակուրդի փոխարեն տալ առայժմ յերկու շաբաթվա արձակուրդ, յերկարացնել գիշերային աշխատանքի տևողութիւնը մինչև 7 ժամ:

Համկի պետք է լայն պրոպագանդ մղի աշխատավորներին աշխատանքի պաշտպանութեան բնագաղափարում ձեռնարկած բոլոր միջոցները յեռանդուն գործադրութեան մեջ ակտիվ կերպով մասնակից դարձնելու նպատակով, վորի համար անհրաժեշտ է՝

1) ուժեղացնել աշխատանքի տեսչութեան կազմակերպման և ընդարձակման աշխատանքը՝ աչք նպատակով բանվորներին միջից ակտիվ աշխատողներ ջոկելու և նախապատրաստելու միջոցով և տեսչութեանը մանր և տնային աղբյուրնա բերութեան վրա տարածելու ուղղութեամբ:

2) տարածել աշխատանքի պաշտպանութեանը աշխատանքի բոլոր տեսակներէ վրա (կառուցող բանվորներէ, ցամաքային - ջրային տրանսպորտի, սպասավորներէ և գյուղատնտեսական բանվորներէ) .

3) աշխատանքից վերջնականապես հանել փոքրահասակներին և կերպով դեռահասներին աշխատանքային որվա հետագա կրճատումը:

Բացի սրբ, Համկի պետք է նպատակ դնի սահմանել՝

1) առաջիկայում աշխատանքի արտադրողականութեանը ընդհանուր բարձրացմանը զուգընթաց՝ 6 ժամվա առավելագույն աշխատանքային որ, առանց աշխատանքի վարձատրութեան նվազեցման, պարտավորեցնելով աշխատավորներին դրանից զուրս՝ առանց հատուկ վարձատրութեան, յերկու ժամ հատկացնել արհեստի և արտադրութեան թեորիային, պետական կառավարման տեխնիկայի գործնական ուսուցմանը և ուղղական արվեստին:

2) աշխատանքի արտադրողականութեանը բարձրացնելու համար մտցնել վարձատրութեան խրախուսիչ սխտեմ:

Սոցալական արդարձութեան բնագաղափարում

Համկի ձգտում է լաշին պետական ոգնություն կազմակերպել վոչ միայն պատերազմի և տարե-  
րային զժառանգությունների զոհերին, այլև հա-  
սարակական հարաբերությունների անդորմալու-  
թյունների զոհերին. վճռական պայքար է մղում  
ամեն տեսակի մակարուծության ու ձրխակերու-  
թյան դեմ և նարստակ և զնում զեպի աշխատան  
քային կյանքը վերադարձնել յուրաքանչյուրին,  
ով դուրս է ընկել աշխատանքի հունից:

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ  
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Ժողովրդական առողջապահության բնագա-  
վառում Համկի իր գործունեյության հիմք է ըն-  
դունում ամենից առաջ լաշին առողջապահական և  
սանիտարական մի շարք միջոցների գործադրու-  
թյունը, վորոնք նպատակ ունեն փանխել հիվան-  
դությունների զարգացումը: Պրոլետարիատի դիկ  
տատուրան արդեն հնարանլորություն է տվել կեն  
տագործելու մի շարք առողջապահական ու բու-  
ժական միջոցներ, վորոնք անիրագործելի յեն  
բուրժուական հասարակության շրջանակներում՝  
զեղատնային գործի, խոչոր մասնատիրական

բուժարանների, կուրորանների ազգայնացում, բը  
ժըկական աշխատանքային ուժերի աշխատան-  
քային պարհակություն և այլն:

Սրան համապատասխան Համկի իր մոտակա  
խնդիրն է համարում՝

1) վճռականորեն գործադրել հոգուտ աշխա  
տանլորների մի շարք սանիտարական միջոցներ,  
վորոնք են.

ա) բնակավայրերի առողջացումը (հողի,  
ջրի և ոգի պահպանումը).

բ) հասարակական սննդի կազմակերպումը  
գիտական-առողջապահական հիմունքներով.

գ) վարակիչ հիվանդությունների զարգացու  
մըն ու տարածումը կանխող միջոցների կազմա-  
կերպումը.

դ) սանիտարական որենսդրության հիմնու-  
մը.

2) սոցիալական հիվանդությունների (թո-  
քախտ, վեներական հիվանդություն, արևոհո-  
լիզմ և այլն) դեմ պայքարը.

3) հանրամասնելի անվճար և վորակյալ բու  
ժական ու դեղային ոգնության ապահովումը:

# ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (ԲՈՒԸՆՎԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կոմունիստական Ինտերնացիոնալի սեկցիա

ՄԻԱԶԱՅՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ Ե ԶԱՄ Կ (Բ) Կ XVII ԶԱՄԱԳՈՒՄԱՐԻ  
ԿՈՂՄԻՑ 1934 թ. ՓԵՏՐՎԱՐԻ 10-ԻՆ

Համամիտություններն առաջին հերթին կոմունիստական (բուլղերի) կուսակցությունը, լինելով Կոմունիստական ինտերնացիոնալի սեկցիան, ԽՍՀՄ պրոլետարիատի սոցալիստիկ կառավարման, կառավարելի և կառավարվող ջրագրության միասնականության և նրա դասակարգային կառավարելիության բարձրագույն ձևը:

Կուսակցությունն իրագործում է պրոլետարիատի, աշխատավոր սոցալիստիկության և բոլոր աշխատավոր մասսաների ղեկավարումը՝ պրոլետարիատի ղեկատարության համար, սոցիալիզմի հաղթանակի համար մղվող պայքարում:

Կուսակցությունը ղեկավարում է պրոլետարական ղեկատարության բոլոր որդանները և ապահովում է սոցիալիստական հասարակություն հանդիմանությունը:

Կուսակցությունը պրոլետարական ղեկավարության ղեկավարումը կարգապահում է ղեկավարված միասնական մարտական կառավարելիություն է: Կուսակցությունն ուժեղ է իր համախմբված կուսակցության, կամքի միասնականության և գործողությունների միասնականության, վստահության, անհամատեղելի յեն ծրագրից նահանջելու, կուսակցական կարգապահությունը խախտելու և կուսակցություններ սում ֆրակցիոն կամքավորումներին հետ:

Կուսակցությունն իր անդամներից պահանջում է ակտիվ և անձնվեր աշխատանք՝ իրագործելու կուսակցության ծրագրերն ու կանոնադրությունը, կատարելու կուսակցության և նրա որդանների բոլոր վորոշումները, ապահովելու կուսակցության շարքերի միասնականությունը և ամրացնելու յեղրայտական, ինտերնացիոնալ հարաբերությունները թե՛ ԽՍՀՄ ազգությունների աշխատավորների միջև և թե՛ աշխարհի բոլոր յերկրները պրոլետարներին հետ:

ԼԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՅԵՎ ՆՐԱՆՑ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Կուսակցութեան անդամ ե համարվում  
ամեն պէք, ով ընդունում է կուսակցութեան ծրա  
դիրը, աշխատում է նրա կազմակերպութեաննե-  
րից մեկի մեջ, յենթարկվում է կուսակցութեան  
վորոշումներին և մուծում է անդամավճար:

2. Կուսակցութեան անդամը պարտավոր է .  
ա) պահպանել կուսակցական խստագույն  
կարգապահութիւնը, ակտիվորեն մասնակցել կու-  
սակցութեան ու յերկրի քաղաքական կյանքին,  
գործնականում կիրառել կուսակցութեան քաղա-  
քականութիւնը և կուսակցական տրզանների վո-  
րոշումները .

բ) անդուլ աշխատել իր գաղափարական պին-  
վածութիւնը բարձրացնելու վրա, մարքսիզմ-է  
նիսիզմի հիմունքները, կուսակցութեան կարևոր  
գույն քաղաքական ու կազմակերպական վորո-  
շումները յուրացնելու վրա և բացատրել դրանք  
անկուսակցական մասսաներին .

գ) վորպես Մորհրդային պետութեան մեջ կա  
ռավարող կուսակցութեան անդամ՝ որինակ լի-  
նել աշխատանքային ու պետական կարգապահու

թեան պահպանման, ակտիվորեն իր գործի տեխ-  
նիկային, անընդհատ բարձրացնելով իր արտա-  
դրական, գործարար վորակավորումը:

3. Անդամների ընդունելութիւնը կուսակցու-  
թեան մեջ կատարելում է բացառապէս անհատա-  
կան կարգով: Նոր անդամներ ընդունվում են  
այն թեկնածուները թիվից, վորոնք անցել են սահ-  
մանված թեկնածուական ստաժը, քաղաքական  
գրագիտութեան դպրոցը և յուրացրել են կուսակ-  
ցութեան ծրագիրն ու կանոնադրութիւնը: Կու-  
սակցութեան անդամ են ընդունվում բանվորնե-  
րը, կոլտնտեսականները, կարմիր բանակայիննե-  
րը, ուսանողները և ծառայողները, վորոնք իրենց  
ցույց են տվել համակրողները խմբակներում,  
խորհուրդներում, արհմիութեաններում, կոմյե-  
րիսոմիսութեան մեջ, կոոպերացիայում, պատգա-  
մավորական ժողովներում իրենց կատարած աշ-  
խատանքներով, այն կազմակերպութեան կարծիք  
դնահատականն ստանալուց հետո, վորտեղ աշխա-  
տել է կամ աշխատում է ընդունվողը:

Թեկնածուներից կուսակցութեան անդամ ըն-  
դունելու կարգը հետևյալն է .

ա) Սահմանվում է չորս կատեգորիա—1) վորչ  
պակաս քան 5 տարվա արտադրական ստաժ

ունեցող արդյունաբերական բանվորներ․ 2) Ծ տարուց պակաս արտադրական ստաժ ունեցող արդյունաբերական բանվորներ, դյուզատնտեսական բանվորներ, բանվորներին ու կոլտնտեսականներին շարքերից յեւած կարմիր-բանակայիններ և անմիջականորեն ցելուով կամ աշխատամասում աշխատող ինժեներ-տեխնիկական աշխատողներ․ 3) կոլտնտեսականներ, տնայնագործական-արհեստագործական արտեղներին անդամներ և տարրական դպրոցի ուսուցիչներ․ 4) մնացած ծառայողները։

բ) Կուսակցութեան մեջ ընդունուելու համար առաջին կատեգորիային պատկանող անձերը ներկայացնում են կուսակցական հնգամյա ստաժ ունեցող կուսանդամների յերեք յերաշխաւորութիւն․ յերկրորդ կատեգորիային պատկանող անձերը—կուսակցական հնգամյա ստաժ ունեցող կուսանդամների հինգ յերաշխաւորութիւն․ յերրորդ կատեգորիային պատկանող անձերը — կուսակցական հնգամյա ստաժ ունեցող կուսանդամների հինգ յերաշխաւորութիւն և ՄՏ կայանի քաղբաժնի կամ շրջկոմի ներկայացուցչի յերաշխաւորութիւնը․ չորրորդ կատեգորիային պատ

կանող անձերը—տասնամյա կուսստաժ ունեցող կուսանդամների հինգ յերաշխաւորութիւն։

Ծանոթութիւն․ — Կոմյերիտմիութիւնից կուսակցութեան անդամ ընդունելիս՝ բոլոր կատեգորիաների համար ՀամԼԿՅԵՄ շրջանային կոմիտեյի յերաշխաւորութիւնը հասարակցութեան կուսակցութեան յերկու անդամի յերաշխաւորութեան։

գ) Այլ կուսակցութիւններից յեւածներն ընդունուով են բացառիկ դեպքերում՝ կուսակցութեան հինգ անդամի յերաշխաւորութեամբ, վորոնցից յերեքը տասը տարւա կուսստաժով, իսկ յերկուսը՝ մինչհեղափոխական կուսստաժով, վոչ այլ կերպ, քան արտադրական սկզբնական կազմակերպութեան միջոցով, անպայման ՀամԿ(բ)Կ Կենտկոմի հաստատուով, անկախ ընդունուելի սոցիալական դրութիւնից։

Ծանոթութիւն․ — Կենտկոմը կարող է այլ կուսակցութիւններից յեւածներին վերջնականապէս կուսակցութեան անդամ հաստատելու իրաւունքը տալ առանձին յերկրային և մարզային կուսակցական կոմիտեներին և ազգային կոմկուսների կենտկոմներին։

դ) Յերաշխաւորութիւնների ստուգումը նա

կորոզում ե ընդունելությանը և կազմում ե տեղական կուսակցական կոմիտեյի պարտականությունը:

ե) Կուսակցության մեջ ընդունելու հարցը նախապես քննում ե սկզբնական կուսակցական կազմակերպությունը, վճռում ե կազմակերպության ընդհանուր ժողովը և ուժի մեջ ե մտնում առաջին ու յերկրորդ կատեգորիաների համար՝ յըջկոմի կամ քաղկոմի հաստատումից հետո, իսկ յերրորդ և չորրորդ կատեգորիաների համար՝ մարզկոմի, յերկրկոմի կամ ազգային կոմ կուսի Կենտկոմի հաստատումից հետո:

զ) Մինչև քսան տարեկան ներառյալ յերիտասարդները կուսակցության մեջ մտնում են մի այն ՀամԼԿՅՅՄ-ի միջոցով:

4. Յերաշխափորոզները պատասխանատու յեն իրենց յերաշխափորոջաների համար և անհիմըն յերաշխափորություն տված լինելու դեպքում յենթարկում են կուսակցական տույժերի՝ ընդհուպ մինչև կուսակցությունից վտարելը:

5. Թեկնածուներից կուսակցության անդամ ընդունվողների կուսակցական ստաժը հաշվվում ե այն որից, յերբ համապատասխան կուսակցական սկզբնական կազմակերպության ընդհանուր

ժողովը վորոշում ե ընդունում տվյալ ընկերոջը կուսակցության անդամ հաստատելու մասին:

6. Մի կազմակերպության ամեն մի անդամ մի ուրիշ կազմակերպության աշխատանքի շրջանը տեղափոխվելու դեպքում վերջինիս կողմից մտցվում ե իր անդամների թվի մեջ:

Ծանոթություն.—Կուսակցության անդամների՝ մի կազմակերպությունից մյուսը փոխադրվելը տեղի յե ունենում ՀամԿ(բ)Կ Կենտկոմի սահմանած կանոնների համաձայն:

7. Կուսակցության այն անդամներն ու թեկնածուները, վորոնք յերեք ամսվա ընթացքում առանց հարգելի պատճառների չեն վճարել անդամավճարները, համարվում են կուսակցությունից դուրս մնացած, վորի մասին հայտնվում ե սկզբնական կազմակերպության անդամների ընդհանուր ժողովին:

8. Վորեւե մեկին կուսակցությունից վտարելու հարցը վորոշում ե այն կազմակերպության ընդհանուր ժողովը, վորի անդամն ե տվյալ անձ նափորությունը և առաջին ու յերկրորդ կատեգորիաների համար հաստատում ե մարզային կամ յերկրային կոմիտեն, իսկ յերրորդ և չորրորդ

կատեգորիաների համար՝ շրջանային կամ քաղաքային կոմիտեն, ըստ վորում տվյալ անձնավորությունը կուսակցական կազմակերպությունն ընդհանուր ժողովի կամ կուսակցական կոմիտեի կողմից վտարվելու օրից հեռացվում է կուսակցական աշխատանքից: Կուսակցությունից վը տարված անդամների մասին հրապարակվում է կուսակցական մամուլում, վտարման պատճառի մատնանշումով:

9. ՀամԿ(բ)Կ Կենտկոմի պարբերական վորոշումներով կատարվում են զտումներ՝ կուսակցությունը սխտեմատիկ կերպով մաքրելու համար՝

դասակարգայնորեն խորթ և թշնամի տարրերից.

յերկերեսանիներից, վորոնք խաբում են կուսակցությունը, թաղցնում են նրանից իրենց իսկական հայացքները և վիժեցնում են կուսակցության քաղաքականությունը.

կուսակցության ու պետություն յերկաթե կարգապահությունը բացահայտ կամ քողարկված ձևով խախտողներից.

բուրժուական տարրերի հետ սերտաջող վերասերվածներից.

կարիերիստներից, մորթապաշտներից և բյուրակրատացած տարրերից.

բարոյասպես քայքայվածներից, վորոնք իրենց անվայելուչ վարքագծով դցում են կուսակցության արժանապատվությունը, արատավորում են կուսակցության դերոշը.

պասսիվներից, վորոնք չեն կատարում կուսակցության անդամի պարտականությունները և չեն յուրացրել կուսակցության ծրագրերը, կանոնադրությունը և կարևորագույն վորոշումները:

## II. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

10. Կուսակցության մեջ մտնել ցանկացող բոլոր անձերն անցնում են թեկնածուական ստաժ, վորի նպատակն է նրանց հիմնավորապես ծանոթացնել կուսակցության ծրագրին, կանոնադրությանն ու տակտիկային և ստուգել թեկնածուի անձնական հատկությունները:

11. Թեկնածու ընդունելու կարգը (կատեգորիաների բաժանելը, յերաշխափորությունների բնույթը և նրանց ստուգումը, կազմակերպության վորոշումը՝ ընդունելություն մասին և

կուսակցութի կողմից հաստատուելը) բոլորովին նույնընէ, ինչ վոր կուսակցութեան անդամ ընդունելիս :

12. Թեկնածուական ստատ սահմանվում է՝ առաջին կատեգորիայի համար մի տարի, յերկրորդ, յերրորդ և չորրորդ կատեգորիաների համար՝ յերկու տարի :

Մանրութիւն. — Այլ կուսակցութեաններուց յելածները, անկախ իրենց սոցիալական դրութեանից, անցնում են թեկնածուական յեռամյա ստատ :

13. Կուսակցութեան անդամութեան թեկնածուները մասնակցում են այն կազմակերպութեան ժողովներին, վորին նրանք պատկանում են, խորհրդակցական ձայնի իրավունքով :

14. Թեկնածուները մուծում են սովորական անդամավճար տեղական կուսակցական կոմիտեի ղրամարկը :

### III. ՀԱՄԱԿՐՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

15. Կուսակցութեանն ամենամոտ անկուսակցական ակտիվիստներին, վորոնք զործով—ար—

տադրութեան մեջ ցույց են տվել իրենց նվիրվածութեանը կուսակցութեանը, բայց դեռ նախապատրաստված չեն կուսակցութեան մեջ ընդունվելու համար, ՀամԿ(բ)Կ շուրջը կազմակերպելու նպատակով՝ ակդրնական կուսակցական կազմակերպութեաններին կից ստեղծվում են ՀամԿ(բ)Կ համակրողներ իմբակներ, վորոնք անպայման յենթարկվում են կուսակցութեան որդանների բոլոր վորոշումներին :

16. Համակրողներ իմբակներ մեջ ընդունելութեանը կատարվում է գործարանային, հիմնարկային և այլ կուսակցական կոմիտեաների, ՄՏ կայանների, խորհատեսուլթեանների և յերկաթուղային արանսպորտի քաղաքիներին վորոշումներով, կուսակցութեան յերկու անդամի յերաշխալորութեամբ :

17. ՀամԿ(բ)Կ համակրողներ իմբակներում կազմակերպվածները պարտավոր են հաճախել բոլոր կուսակցական դռնբաց ժողովները, վորտեղ նրանք ոգտվում են խորհրդակցական ձայնի իրավունքով, ակտիվորեն պայքարել կուսակցութեան և կառավարութեան վորոշումների կատարման համար, կուսակցական կազմակերպութեաններին ղեկավարութեամբ սիստեմատիկ կերպով

աշխատել իրենց զաղափարական - քաղաքական մակարդակը բարձրացնելու վրա:

IV. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՍԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ  
ԿԱՌՈՒՑՎԱՌՔԻ ՄԱՍԻՆ

18. Կուսակցության կազմակերպական կառուցվածքի ղեկավար սկզբունքը ղեմնկրատական ցենտրալիզմն է, վորը նշանակում է՝

ա) վերից վար՝ կուսակցության բոլոր ղեկավար որդանների ընտրականությունը.

բ) կուսակցական որդանների պարբերական հաշվետվությունն իրենց կուսակցական կազմակերպությունների առաջ.

գ) կուսակցական խիստ կարգապահություն և փոքրամասնության յենթարկվելը մեծամասնության.

դ) բարձրագույն որդանների վորոշումներին անպայման պարտադիր լինելն ստորին որդանների և կուսակցության բոլոր անդամների համար:

19. Կուսակցությունը կառուցվում է ղեմնկրատական ցենտրալիզմի հիմունքներով ըստ տերիտորիալ - արտադրական հատկանիշի. վոր

յեվե շրջան սպասարկող կազմակերպությունը վերադաս է համարվում տվյալ շրջանի մի մասն սպասարկող բոլոր կազմակերպությունների նրկատամբ, կամ վորեւ արտադրության կամ կառավարչության ամբողջ ճյուղն սպասարկող կազմակերպությունը վերադաս է համարվում արվյալ ճյուղի մասերն սպասարկող բոլոր կազմակերպությունների նկատմամբ:

20. Կուսակցական բոլոր կազմակերպություններն ափսոսում են տեղական հարցերը լուծելիս, վորչափով այդ վորոշումները չեն հակասում կուսակցության վորոշումներին:

21. Յուրաքանչյուր կազմակերպության բարձրագույն ղեկավար որդանն է ընդհանուր ժողովը, կոնֆերենցիան կամ համագումարը:

22. Ընդհանուր ժողովը, կոնֆերենցիան կամ համագումարն ընտրում են կոմիտե, վորը նրանց գործադիր որդանն է և ղեկավարում է կազմակերպության ամբողջ ընթացիկ աշխատանքը:

23. Կուսակցության կազմակերպման սխեման հետևյալն է՝

ա) ՍՍՀՄ տերիտորիա — Համամիութենական համագումար — Համգ(բ)Կ Կենտկոմ.

բ) մարզեր, յերկիրներ, հանրապետություններ — մարզային, յերկրային կոնֆերենցիաներ, ազգային կոմիտեաների համագումարներ — մարզ կոմիտեներ, յերկրկոմիտեներ, ազգային կոմիտեաների կենտկոմիտեներ :

գ) քաղաքներ, շրջաններ — քաղաքային ու շրջանային կոնֆերենցիաներ — քաղաքային ու շրջանային կոմիտեաներ :

դ) ձեռնարկություններ, դյուրեր, կոլտընտեսություններ, ՄՏ կայաններ, կարմիր - բանակային զորամասեր, հիմնարկներ — սկզբնական կուսակցական կազմակերպությունների ընդհանուր ժողովներ, կոնֆերենցիաներ — սկզբնական կուսակցական կոմիտեաներ (գործարանային կուսկոմիտե, Փարբիկային կուսկոմիտե, կարմիր - բանակային զորամասի կուսբյուրո և այլն) :

2A. Յենթարկման, հաշվետվության, կուսակցական վերջումների ընթացքի ու վիճարկման կարգը (վերադաս ինստանցիայից դեպի ստորին ինստանցիա) — Համամիութենական համագումար, ՀամԿ(բ)Կ կենտկոմ, մարզային - յերկրային կոնֆերենցիա, ազգային կոմիտեաների կոնֆերենցիա կամ համագումար, մարզային, յերկ

բային կոմիտե, ազգային կոմիտեի կենտկոմ, քաղաքային — շրջանային կոնֆերենցիա, քաղաքային — շրջանային կոմիտե և այլն :

25. Կուսակցական դիրեկտիվներն ու վորոշումներն իրագործելու (և խորհրդային - անտեսական որդաններում ու ստորին կուսկազմակերպություններում դրանց կատարումն ստուգելու) նպատակով գործնական աշխատանք կատարելու համար՝ մարզկոմիտեում, յերկրկոմիտեում, ազգային կոմիտեաների կենտկոմիտեում և ՀամԿ(բ)Կ կենտկոմում ստեղծվում են աւղղական արտադրական - ճյուղային բաժիններ :

ՀամԿ(բ)Կ կենտկոմում՝

ա) Գյուղատնտեսական, բ) Արդյունաբերական, գ) Տրանսպորտային, դ) Պլանային - Ֆինանսա-տնտեսական, յե) Քաղաքական - մարտչական, զ) Ղեկավար կուսորդանների, ե) Կուլտուրայի և լենինիզմի պրոպագանդի, ը) Մարքսի - Ենգելսի - Լենինի ինստիտուտ (ինչպես և յերկու սեկտոր՝ Գործերի կառավարչության և Հատուկ) :

Մարզկոմիտեում — յերկրկոմիտեում և ազգային կոմիտեաների կենտկոմիտեում՝

ա) Գյուղատնտեսական, բ) Արդյունաբերա-

կան - տրանսպորտային, դ) խորհրդային - առևտրական, զ) Կուլտուրայի և լենինիզմի սրտ պաղանդի, ե) Ղեկավար կուսորգանները (քաղաքային ու շրջանային) և Հատուկ սեկտոր:

Յուրաքանչյուր արտադրական - ճյուղային բաժնում կենտրոնացվում է սովյալ ճյուղի ամբողջ աշխատանքը՝ կազմակերպական - կուսակցական աշխատանք, կազմերի բաշխում ու պատրաստում, ազիտ - մասսայական աշխատանք, արտադրական սրտպաղանդ, հսկողություն համապատասխան խորհրդային - տնտեսական որդանները և կուսակցական կազմակերպությունների կողմից կուսակցական վերոչումները կատարելու վրա:

26. Կուսակցություն յուրաքանչյուր կազմակերպություն վերջնականապես հաստատվելուց հետո իրավունք ունի ունենալու իր կնիքը, բայց միմիայն համապատասխան վերադաս կուսակցական կազմակերպության սանկցիայով:

## V. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

27. Կուսակցություն ղերազույն որդանը համազումարն է: Հերթական համազումարները հրավիրվում են վոչ ուչ, քան յերեք տարին մի անգամ: Արտակարգ համազումարները հրավիրում է Կենտրոնական Կոմիտեն սեփական նախաձեռնությամբ կամ կուսակցական վերջին համազումարում ներկայացված անդամների ընդհանուր թվի առնվազն մի յերրորդի պահանջով: Կուսակցական համազումարի հրավիրումը և որակարգը հայտարարվում է վոչ ուչ, քան համազումարից մեկ ու կես ամիս առաջ: Արտակարգ համազումարները հրավիրվում են յերկու ամսվա ժամանակամիջոցում:

Համազումարը վավերական է համարվում, յեթե նրանում ներկայացված է վերջին հերթական համազումարում ներկայացված՝ կուսակցության բոլոր անդամների կեսից վոչ պակասը:

Կուսակցության համազումարի ներկայացուցչության նորմաները սահմանում է Կենտրոնական Կոմիտեն:

28. Այն դեպքում, յերբ Կենտրոնական Կոմի-

տե՛ն 27-րդ կետում մասնանշված ժամանակամիջոցում չհրավիրի արտակարգ համադրումար, արտակարգ համադրումարի հրավիրումը սկանչնուղ կազմակերպություններն իրավունք ունեն ըստեղծելու կազմակերպական կոմիտե, վորն ողտվում է Կենտրոնական Կոմիտեյի իրավունքներով արտակարգ համադրումար հրավիրելու հարցում :

### 29. Համադրումարը՝

ա) լսում և հաստատում է Կենտրոնական Կոմիտեյի, Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի, Կենտրոնական Վերստուգիչ Հանձնաժողովի և այլ կենտրոնական կազմակերպությունների հաշվետվությունները :

բ) վերանայում և փոփոխում է կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը :

գ) վերոշում է կուսակցության տակտիկական գիծն ընթացիկ քաղաքականության հիմնական հարցերի վերաբերյալ :

դ) ընտրում է Կենտրոնական Կոմիտե, Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողով, Կենտրոնական Վերստուգիչ Հանձնաժողով և նշում է Խորհրդային Վերահսկողության Հանձնաժողովի

կազմը՝ ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի հաստատմանը ներկայացնելու համար :

30. Կենտրոնական Կոմիտեն և մյուս կենտրոնական կազմակերպություններն ընտրվում են համադրումարի սահմանած կազմով : Կենտրոնական Կոմիտեյի անդամների հեռանալու դեպքում Կենտկոմի կազմը լրացվում է համադրումարի ընտրած թեկնածուներից՝ համադրումարի սահմանած կարգով :

31. Կենտրոնական Կոմիտեն առնվազն մի սըլ լինար նիստ և ունենում է ամիսը մեկ անգամ : Կենտկոմի անդամության թեկնածուները Կենտկոմի սըլենումների նիստերին ներկա յեն լինում խորհրդակցական ձայնի իրավունքով :

32. Կենտրոնական Կոմիտեն կազմակերպում է քաղաքական աշխատանքի համար — Քաղաքական բյուրո, կազմակերպական աշխատանքի ընդհանուր ղեկավարման համար — Կազմակերպական բյուրո և կազմակերպական ու գործադիր բնույթի կրող ընթացիկ աշխատանքի համար — Քարտուղարություն :

33. Կենտրոնական Կոմիտեն համադրումարների միջև ընկած ժամանակամիջոցում ղեկավարում է կուսակցության ամբողջ աշխատանքը :

ներկայացնում և կուսակցությունը՝ այլ կուսակցությունների, կազմակերպությունների և հիմնարկների հետ ունեցած հարաբերություններում, կազմակերպում և կուսակցության զանազան, հիմնարկներ և ղեկավարում և նրանց դործունեությունը, նշանակում և կենտրոնական որգանների խմբագրությունները, վորոնք աշխատում են նրա վերահսկողությամբ, և հաստատում և տեղական խոչոր կազմակերպությունների կուսակցական որգանների խմբագիրներին, կազմակերպում և ղեկավարում և հասարակական նշանակություն ունեցող ձեռնարկությունները, բաշխում և կուսակցության ուժերն ու միջոցները և վարում և կենտրոնական դրամարկղը:

Կենտրոնական Կոմիտեն ուղղություն և տալիս կենտրոնական խորհրդային և հասարակական կազմակերպությունների աշխատանքին՝ նրանցում յեղած կուսակցական խմբակների միջոցով:

34. Բուլչեիկյան ղեկավարությունն ու քաղաքական աշխատանքն ուժեղացնելու նպատակով, կենտրոնական Կոմիտեն իրավունք ունի ստեղծել քաղաքական բաժիններ և ջոկել կենտկոմի

կուսակցական կազմակերպիչներ սոցիալիստական շինարարություն հետ մնացող այն ճակատամասերում, վորոնք առանձնապես կարևոր նշանակություն են ստանում ժողովրդական տնտեսությունում ու ամբողջ յերկրի համար, ինչպես նաև, յերբ քաղաքական բաժինները կատարում են իրենց հարվածային խնդիրները՝ վերածել դրանք արտադրական - տերիտորիալ հատկանիշով կառուցված սովորական կուսակցական որգանների:

Քաղաքաժիններն աշխատում են համապատասխան արտադրական կուսակցական կոմիտեների իրավունքներով և ղեկավարվում են անմիջականորեն ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կողմից Կենտկոմի արտադրական-ճյուղային բաժինների միջոցով, կամ հատկապես կազմակերպված քաղվարչությունների ու քաղսեկտորների միջոցով:

35. Կենտրոնական Կոմիտեն պարբերաբար իրադեկ և դարձնում կուսակցական կազմակերպություններին իր աշխատանքի մասին:

36. Կուսակցական վերահսկողություն հանձնաժողովը՝

ա) վերահսկում և կուսակցություն և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վորոշումների կատարմանը.

բ) պատասխանատուության և կանչում կուսակցական կարգապահությունը խախտող մեղավորներին :

դ) պատասխանատուության և կանչում կուսակցական ետիկան խախտող մեղավորներին :

37. Կենտրոնական Վերստուգիչ Հանձնաժողովը վերստուգում է՝ ա) գործերի ընթացքի արագությունն ու ճշտությունը կուսակցություն կենտրոնական որդաններում և ՀամԿ(բ)Կ կենտկոմի քարտուղարության ասպարատի կանոնավարությունը : բ) ՀամԿ(բ)Կ կենտկոմի գրամարկրը և ձեռնարկությունները :

VI. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ—  
ՄԱՐԶԱՅԻՆ — ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

38. Մարզային — յերկրային — հանրապետական կուսակցական կազմակերպություն բարձրագույն որդանն է մարզային — յերկրային կուսակցական կոֆերենցիան կամ ազգային կոմկուսի համագումարը, իսկ դրանց միջև ընկած ժամանակամիջոցում՝ մարզային — յերկրային կոմիտեն, ազգային կոմկուսի կենտկոմը : Իրենց

գործունեություն մեջ նրանք ղեկավարվում են Համամիութենական կոմունիստական կուսակցություն և նրա ղեկավար որդանների ընդհանուր վերոչումներով :

39. Հերթական յերկրային — մարզային կոնֆերենցիա կամ ազգային կոմունիստական կուսակցությունների համագումար հրավիրում է յերկրային — մարզային կոմիտեն — ազգային կոմկուսի կենտկոմը՝ մեկ ու կես տարին մի անգամ, իսկ արտակարգ կոնֆերենցիան կամ համագումարը հրավիրվում է յերկրային — մարզային կոմիտեյի — ազգային կոմկուսի կենտկոմի վերոչմամբ կամ մարզի — յերկրի — հանրապետության մեջ մտնող կազմակերպությունների անդամների ընդհանուր թվի  $\frac{1}{3}$ -ի պահանջով :

Յերկային — մարզային կոնֆերենցիայի, այդպիսին կոմկուսի համագումարի ներկայացուցչություն նորմաները սահմանում է յերկրային — մարզային կոմիտեն — ազգային կոմկուսի կենտկոմը :

Յերկրային — մարզային կոնֆերենցիան, այդպիսին կոմկուսի համագումարը լսում ու հաստատում է յերկրային — մարզային կոմիտեյի —

ազգային կոմիտեի կենտկոմի, վերստուգելիչ հանձնաժողովի և յերկրային ու մարդային այլ հիմնարկների հաշվետու ղեկավարները, քննարկում են յերկրի — մարզի կամ հանրապետութեան կուսակցական, խորհրդային, տնտեսական, արհմիութենական աշխատանքի հարցերը և ընտրում են յերկրային — մարդային կոմիտե (հանրապետութուններում՝ ազգային կոմիտեի կենտկոմ), վերստուգելիչ հանձնաժողով և կուսակցութեան համամիութենական համագումարի պատգամավորներ:

40. Յերկրային — մարդային կոմիտեն, իսկ հանրապետութուններում՝ ազգային կոմիտեի կենտկոմը, ընթացիկ աշխատանքի համար ընտրում են համապատասխան գործադիր օրգաններ՝ 11 հոգուց վոչ ավելի կազմով, վորոնք հաստատվում են ՀամԿ(բ)Կ կենտկոմի կողմից, և յերկու քարտուղար՝ առաջին և յերկրորդ: Քարտուղարների համար պարտադիր են առնվազն 12 տարվա կուսակցական ստաժ:

41. Յերկրային — մարդային կոմիտեն — ազգային կոմիտեի կենտկոմը կազմակերպում են կուսակցութեան գանազան հիմնարկներ՝ յերկրի — մարզի — հանրապետութեան սահմաններում,

ղեկավարում են նրանց գործունեութունը, նըշանակում են յերկրային — մարդային կուսակցական օրգանի խմբագրութունը, վորն աշխատում են նրա վերահսկողութեան տակ, ղեկավարում են արտակուսակցական կազմակերպութուններում յեղած կուսակցական խմբերը, կազմակերպում և ղեկավարում են իր այն ձեռնարկութունները, վորոնք ընդհանուր նշանակութուն ունեն մարզի — յերկրի — հանրապետութեան համար, իր կազմակերպութեան սահմաններում բաշխում են կուսակցութեան ուժերն ու միջոցները և վարում են յերկրային — մարդային — հանրապետական կուսակցական դրամարկղը:

42. Յերկրային — մարդային կոմիտեի — ազգային կոմիտեի կենտկոմի պլենումը հրավիրվում են առնվազն յերեք ամիսը մեկ անգամ:

43. Յերկիրներն ու հանրապետութունների կազմի մեջ մտնող ազգային և այլ մարզերի ու ինքնավար հանրապետութունների կուսակցական կազմակերպութուններն աշխատում են յերկրային կոմիտեների — ազգային կոմիտեների կենտկոմների ղեկավարութեամբ և իրենց ներքին կյանքում ղեկավարվում են այն դրույթներով, վոր շարադրված են կուսակցութեան կանոն

նադրութեան VI զլիւում յերկրային, մարդային և հանրապետական կազմակերպությունների մասին:

VII. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ (ԳՅՈՒՂԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

44. Քաղաքային — շրջանային կուսակցական կոնֆերենցիան հրավիրվում է քաղաքային — շրջանային կոմիտեյի կողմից վոչ պահաս, քան ստրեկան մի անգամ, արտակարգ կոնֆերենցիան՝ քաղաքային — շրջանային կոմիտեյի վարչությանի կամ քաղաքային — շրջանային կազմակերպութեան մեջ մտնող կազմակերպութեանների անդամների ընդհանուր թվի մեկ յերրորդի պահանջով:

Քաղաքային—շրջանային կոնֆերենցիան լրսում է հաստատում է քաղաքային—շրջանային կոմիտեյի, վերստուգելիչ հանձնաժողովի ու քաղաքային — շրջանային այլ հիմնարկների հաշվե սվությունները, ընտրում է քաղաքային — շրջանային կոմիտե, վերստուգելիչ հանձնաժողով և յերկրային—մարդային կոնֆերենցիայի կամ աղ-

ղային կոմիտեի համագումարի պատգամավորներ:

45. Քաղաքային կոմիտեյի քարտուղարի համար պարտադիր է տասնամյա կուսակցական ստաժ, իսկ շրջանային կոմիտեյի քարտուղարի համար՝ յոթնամյա կուսակցական ստաժ: Քաղաքային և շրջանային կոմիտեների քարտուղարներին հաստատում է մարզկոմը, յերկրկոմը կամ ազգային կոմիտեի կենտկոմը:

46. Քաղաքային — շրջանային կոմիտեն ընտրում է 5-7 հոգուց բաղկացած բյուրո, կազմակերպում ու հաստատում է սկզբնական կուսակցական կազմակերպությունները ձեռնարկություններում, խորհանտեսություններում, ՄՏ կայաններում, կոլտնտեսություններում և հիմնարկներում, վարում է բոլոր կոմունիստների ցուցակազրումը, կազմակերպում է կուսակցութեան դանազան հիմնարկներ քաղաքի ու շրջանի սահմաններում և ղեկավարում է նրանց գործունեյությունը, նշանակում է քաղաքային—շրջանային կուսակցական որդանի խմբազրին, վորն աշխատում է նրա ղեկավարութեամբ ու վերահրս կողութեամբ, ղեկավարում է արտակուսակցական կազմակերպությունների կուսակցական խում

բախներին, կազմակերպում ե համաքաղաքային, շրջանային նշանակութիւն ունեցող իր ձեռնարկութիւնները, քաղաքի և շրջանի սահմաններում բաշխում է կուսակցութեան ուժերն ու միջոցները և վարում է քաղաքային — շրջանային դրամարկը: Քաղաքային—շրջանային կոմիտեն յերկրային—մարզային կոմիտեին — ազգային կոմկուսի Կենտկոմին հաշվետուութիւն ե ներկայացնում իր գործունեութեան մասին՝ Համ. Կ(բ)Կ Կենտկոմի սահմանած ժամկետներում և ձևով:

47. Խոշոր քաղաքներում ՀամԿ(բ)Կ Կենտկոմի թույլտուութեամբ ստեղծվում են քաղաքային կոմիտեիին յենթակա շրջանային կազմակերպութիւններ:

### VIII. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

48. Կուսակցութեան հիմքն են կազմում սկզբը նախան կուսակցական կազմակերպութիւնները: Ազգրնական կուսակցական կազմակերպութիւններն ստեղծվում են Փարբիկներում, գործարաններում, խորհտնտեսութիւններում և տնտ

սական այլ ձեռնարկութիւններում, կորտնտեսութիւններում, ՄՏ կայաններում, կարմիր բանակային դորամասերում, գյուղերում, հիմնարկներում և այլն, յերբ կա կուսակցութեան առնվազն յերեք անդամ: Այն ձեռնարկութիւններում, կուտնտեսութիւններում, հիմնարկներում և այլն, վորտեղ կուսակցութեան անդամների թիւը յերեքից պակաս ե, ստեղծվում են թեկնածուական կամ կուսակցական — կոմյերիտական խմբեր, վորոնց ղլխավորում ե շրջկոմների, քաղկոմների կամ քաղբաժինների կողմից ջոկված կուսակց մակերպիչը: Սկզբնական կուսակցական կազմակերպութիւնները հաստատում են շրջանային կամ քաղաքային կոմիտեները կամ համապատասխան քաղբաժինները:

49. Խոշոր ձեռնարկութիւններում, հիմնարկներում, կուտնտեսութիւններում և այլն, վորոնք ունեն մեծ թիւով կոմունիտաներ (100 անդամից մինչև 3000 և ավելի), ամբողջ ձեռնարկութիւնը, հիմնարկը և այլն ընդգրկող ընդհանուր սկզբնական կուսակցական կազմակերպութեան ներսում, յուրաքանչյուր առանձին դեպքում՝ շրջկոմի—քաղկոմի կամ համապատասխան քաղբաժնի հաստատմամբ՝ կարող են կազմակերպվել

կուսակցական կազմակերպություններ ըստ ցեխերի, աշխատամասերի, բաժինների և այլն: Հետևաբար, աշխատամասային և այլ կազմակերպությունների ներսում իրենց հերթին կարող են ստեղծվել կուսակցական խմբակներ՝ ըստ ձևանարկության բրիգադների, ագրեգատների և այլն:

50. Սկզբնական կուսակցական կազմակերպությունը բանվորական և դուրդացիական մասսաներին կապում է կուսակցութայն ղեկավար օրգանների հետ: Նրա խնդիրն է՝

1) ագիտացիոն և կազմակերպական աշխատանք կատարել մասսաների մեջ հանուն կուսակցութայն լոզունգների ու վորոշումների:

2) զբաղվել համակրողներ ու նոր անդամներ և նրանց տալ քաղաքական դաստիարակություն:

3) ոժանդակել շրջկոմին—քաղկոմին կամ քաղբաժնին՝ նրա ամենօրյա կազմակերպական և ագիտացիոն աշխատանքում:

4) մոբիլիզացիայի յենթարկել մասսաներին ձեռնարկություններում, խորհանտեսություններում, կոլտնտեսություններում և այլն՝ կատարելու արտադրական պլանը, ամրացնելու աշխատանքային կարգապահությունը և զարգացնելու հարվածայնությունը:

5) պայքար մղել ձեռնարկություններում, խորհանտեսություններում, կոլտնտեսություններում թափթիվածության և գործն անտնտեսաբար վարելու դեմ, ամենօրյա հոգատարություն ցույց տալ բանվորների ու կոլտնտեսականների/կենցաղային պայմանները բարելավելու համար:

6) վորպես կուսակցական օրգան՝ ակտիվ կերպով մասնակցել յերկրի քաղաքական ու տնտեսական կյանքին:

51. Ընթացիկ աշխատանքը վարելու համար սկզբնական կուսակցական կազմակերպությունն ընտրում է կուսակցական կոմիտե (Ֆարեկուկոմ, գործկուսկոմ և այլն) 11 հոգուց վոչ ավելի կազմով; մի տարի ժամանակով, իսկ ցեխային կազմակերպությունն ընտրում է կուսակցական կազմակերպչ, վորին հաստատում է սկզբնական կուսակցական կոմիտեն:

15 հոգուց պակաս անդամ և թեկնածու ունեցող կուսակցական կազմակերպություններում կուսակցական կոմիտեներ չեն ստեղծվում, այլ ընտրվում են կուսակցական կազմակերպչներ:

Սկզբնական կուսակցական կոմիտեներում, վորոնք միավորում են կուսակցութայն վոչ ավելի քան 100 անդամ, կուսակցական աշխատանքը

վարում են, վորպես կանոն, արտադրութեան մեջ աշխատելուց չազատված աշխատողները: Մինչև 1000 կուսանդամ ընդգրկող կուսակցական կոմիտեներում պետք է աշխատեն արտադրութեան մեջ աշխատելուց ազատված 2-3 վճարովի աշխատողներ: Մինչև 3000 և ավելի անդամ ընդգրկող կուսկոմիտեներում կարող են աշխատել արտադրութեանից ազատված 4-5 ընկերներ:

Սկզբնական կուսակցական կոմիտեներին քարտուղարներին համար պարտադիր է առնվազն 3-ամյա կուսակցական ստաժ, իսկ կուսկազմակերպիչների համար՝ 2-ամյա կուսակցական ստաժ:

## IX. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ

### ԿՈՒՍԱԿԱՑՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

52. Կարմիր բանակի, Կարմիր նավատորմի և ավիացիայի կուսակցական աշխատանքի ընդհանուր ղեկավարութիւնն իրադրոժում է ԲԳԿԲՔ Գաղաքական վարչութիւնը, վորն աշխատում է ՀամԿ(բ)Կ Կենտկոմի ռազմական բաժնի իրավունքով: ԲԳԿԲ Գաղվարչութիւնն իր ղեկավարութիւնը կենսագործում է իր կողմից նշանակ

վող քաղբաժինների, զինկոմների և համապատասխան բանակային կոնֆերենցիաներում ընտրվող կուսակցական հանձնաժողովների միջոցով:

Կարմիր բանակի, նավատորմի և ավիացիայի կուսակազմակերպութիւններն աշխատում են ՀամԿ(բ)Կ Կենտկոմի հաստատած հատուկ հրահանգի հիման վրա:

53. Ոկրուգների, նավատորմների ու բանակի քաղբաժինների պետերի համար պարտադիր է 10-ամյա կուսակցական ստաժ, ղեկիղխանների և բրիգադների քաղբաժինների պետերի համար՝ 6-ամյա կուսակցական ստաժ:

54. Քաղորդանքները պարտավոր են սերտ կապ պահպանել տեղական կուսակցական կոմիտեների հետ՝ քաղորդանքների ղեկավարների և զինկոմների (քաղբաժնի գծով ողնականների) մշտական մասնակցութեամբ տեղական կուսակցական կոմիտեներում, ինչպես նաև կուսկոմիտեներում քաղորդանքների պետերի և զինկոմների (քաղաքական գծով ողնականների) ղեկուցումները զորամասերում կատարվող քաղաշխատանքի մասին սիստեմատիկաբար լսելու միջոցով:

55. Արտակուսակցական խորհրդային, արհամիութենական, կոոպերատիվ և այլ մասսայական կազմակերպութիւնների բոլոր համազումարներում, խորհրդակցութիւններում և ընտրովի որգաններում, վորտեղ կա կուսակցութեան առնվաղն յերեք անգամ, կազմակերպում են կուսակցական խմբակներ, վորոնց խնդիրն է քաղմակողմանիորեն ուժեղացնել կուսակցութեան ազդեցութիւնը և կիրառել նրա քաղաքականութիւնն արտակուսակցական միջավայրում, ամրապնդել կուսակցական ու խորհրդային յերկաթե կարգապահութիւնը, պայքար մղել բոլորողրատիղմի դեմ, ստուգել կուսակցական ու խորհրդային դիրեկտիվների կատարումը:

Սումբն ընթացիկ աշխատանքի համար ընտրում է քարտուղար:

56. Սմբերը, անկախ իրենց նշանակութեանից, ամբողջովին յենթարկվում են համապատասխան կուսկազմակերպութիւններին (Համ.

Կ(բ)Կ Կենտկոմ, յերկրկոմ, մարդկոմ, ազգային կոմկուսի Կենտկոմ, քաղկոմ, շրջկոմ): Սմբերը բոլոր հարցերում պարտավոր են խստիվ և անշեղ կերպով հետևել կուսակցական ղեկավար կազմակերպութիւնների վորոշումներին:

XI. ՆԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

57. Կուսակցական քաղաքականութեան հարցերի ազատ և քործարար քննարկումն առանձին կազմակերպութիւններում կամ ամբողջ կուսակցութեան մեջ կուսակցութեան յուրաքանչյուր անդամի անկապտելի իրավունքն է, վորը բղխում է ներկուսակցական ղեմողրատիայից: Արմիայն ներկուսակցական ղեմողրատիայի հիման վրա հնարավոր է ծավալել բոլշևիկյան ինքնաքննադատութիւնը և ամրացնել կուսակցական կարգապահութիւնը, վորը պետք է լինի ղեկակցական և վոչ մեխանիկական: Սակայն լայն դիսկուսիան, մանավանդ համամիութենական մասշտաբի դիսկուսիան կուսակցական քաղաքականութեան հարցերի շուրջը, պետք է այնպես կազմակերպված լինի, վոր նա

չհանդեցնի աննչան փոքրամասնության փորձերին՝ իր կամքը փաթաթելու կուսակցութեան հսկա մեծամասնության վրին, կամ Փրակցիոն խմբավորումներ կազմակերպելու փորձերին, վորոնք ջլատում են կուսակցութեան մի ասնությունը, պառակտում առաջացնելու փորձերին, վորոնք կարող են յերերել պրոլետարիատի դիկտատուրայի ուժն ու տոկոսնությունը, ուրախություն պատճառելով բանվոր դասակարգի թշնամիներին: Ուստի համամիութենական մասշտաբի լայն դիսկուսիան կարող են անհրաժեշտ համարվել միայն այն դեպքում, յեթե՝ ա) այդ անհրաժեշտությունն ընդունում են մարդային կամ հանրապետական մասշտաբի առնվազն մի քանի տեղական կուսկազմակերպություններ, բ) յեթե կենտկոմի ներսում բավականաչափ հաստատուն մեծամասնություն չկա կուսակցական քաղաքականութեան կարևորագույն հարցերի շուրջը, գ) յեթե, չնայած կենտկոմում վորոշ տեսակետի վրա կանգնած հաստատուն մեծամասնության գոյութեան, այնուամենայնիվ կենտկոմն անհրաժեշտ է համարում կուսակցութեան մեջ դիսկուսիոն քննարկում կատարելու միջոցով ստուգել իր քաղաքականութեան ճիշտ լինելը: Միմիայն

այս պայմանները կատարելու դեպքում կարելի յե ապահովել կուսակցությունը՝ հակակուսակցական տարրերի կողմից ներկուսակցական դեմոկրատիան չարարելուց, միմիայն այդ պայմաններով կարելի յե վստահ լինել, վոր ներկուսակցական դեմոկրատիան ոգուտ կբերի գործին և չի ոգտագործվի ի վնաս կուսակցութեան ու բան վոր դասակարգի:

58. կուսակցութեան միասնութեան պահպանումը, անողոք կռիվը Փրակցիոն պայքարի ու պառակտման ամենաչնչին փորձերի դեմ, կուսակցական ու խորհրդային խտագույն կարգապահությունը հանդիսանում են կուսակցութեան բոլոր անդամներին, բոլոր կուսակցական կազմակերպությունների առաջնագույն պարտականությունը:

Կուսակցութեան մեջ և ամբողջ խորհրդային աշխատանքում խիստ կարգապահություն կիրառելու և ամեն տեսակ Փրակցիոնականութեան վերացումով առավելագույն միասնութեան հասնելու համար ՀամԿ(բ)Կ կենտկոմն իրավունք ունի՝ կարգապահությունը խախտելու կամ թե ֆրակցիոնականությունը վերստեղծելու կամ թույլ տալու դեպքում՝ կիրառել կուսակցական սույ-

մի բոլոր միջոցները, ընդհուպ մինչև կուսակ-  
ցությունից վտարելը, իսկ Կենտկոմի անդամնե-  
րի նկատմամբ՝ թեկնածուներին շարքը փոխադրե-  
լը և վորպես ծայրահեղ միջոց՝ կուսակցությու-  
նից վտարելը: Կենտկոմի անդամների, Կենակոմի  
անդամության թեկնածուներին և Կուսակցական  
Վերահսկողության Հանձնաժողովի անդամների  
նկատմամբ այդպիսի ծայրահեղ միջոց կիրառե-  
լու պայմանը պետք է լինի Կենտկոմի պլենումի  
գումարումը, վորին հրավիրվում են Կենտկոմի  
անդամության բոլոր թեկնածուները և կուսակ-  
ցական Վերահսկողության Հանձնաժողովի բո-  
լոր անդամները: Յեթե կուսակցության ամենա-  
պատասխանատու ղեկավարների այդպիսի ընդհա-  
նուր ժողովը ձայների յերկու յերրորդով անհրա-  
ժեշտ կգտնի Կենտկոմի կամ Կուսակցական Վե-  
րահսկողության Հանձնաժողովի անդամներին  
փոխադրել թեկնածուներին շարքը կամ վտարել  
կուսակցությունից, ապա այդ միջոցը պետք է  
իրագործվի անհապաղ:

59. Կուսակցական և խորհրդային կենտրոն  
ների վորոշումները պետք է կատարվեն արագ ու  
ճշտիվ: Բարձրագույն կազմակերպությունների  
վորոշումները չկատարելու և կուսակցության

հասարակական կարծիքով հանցավոր ճանաչված  
այլ զանցանքների հետևանքը կլինի—կազմակեր-  
պության համար՝ պարսավանք և ընդհանուր վե-  
րահաշվառում (կազմակերպության ցրումը),  
կուսակցության առանձին անդամների համար՝  
պարսավանքի այս կամ այն ձևը (ի տես դնել,  
նկատողություն անել և այլն), հրապարակային  
պարսավանք, ժամանակավորապես հեռացնել  
պատասխանատու կուսակցական և խորհրդային  
աշխատանքից, վտարել կուսակցությունից, վտա-  
րել կուսակցությունից՝ հաղորդելով զանցանքի  
մասին վարչական և դատական իշխանություննե-  
րին:

60. Կուսակցության այն անդամները, վո-  
րոնք հրաժարվում են Կուսակցական Վերահսկո-  
ղության Հանձնաժողովի հարցերին ճշտորեն պա-  
տասխանելուց, պետք է անհապաղ վտարվեն կու-  
սակցությունից:



ХИ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ  
ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

61. Կուսակցության և նրա կազմակերպու-  
թյունների դրամական միջոցները դրոյանում են

անդամավճարներից, կուսակցութեան ձեռնարկու  
թյունների յեկամուսաններից և այլ մուծումնե-  
րից:

62. Կուսակցութեան անդամների և թեկնա-  
ծուների համար սահմանվում են ամսական ան-  
գամավճարներ հետևյալ չափով.

Մի ցել	100 ռ. աշխատ. ստացողն	վճարում են	- ռ. 20 կ.
101-ից	150 ռ.	»	» 60 »
151-ից	200 »	»	» 1 ռ. — »
201-ից	250 »	»	» 1 ռ 50 »
251-ից	300 »	»	» 2 ռ. — »
300-ից բարձր մինչև 500 »	»	»	վաստակի 2 <sub>0</sub> / <sub>0</sub>
500-ից	»	»	» 3 <sub>0</sub> / <sub>0</sub>

63. Մուտքի վճարները գանձվում են թեկնա  
ծու ընդունվելիս՝ ստացվող աշխատավարձի 3  
սոսի չափով:



Հրատարակչութունից . . . . . 3

ՀԱՄԱՄԻՌՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ  
(ԲՈՂՇԵՎԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԾՐԱԳԻՐԸ

Ներածութուն . . . . .	5
Ընդհանուր քաղաքական բնագավառում . . . . .	19
Ազգային հարաբերությունների բնա- գավառում . . . . .	29
Ռազմական բնագավառում . . . . .	31
Դատական բնագավառում . . . . .	34
Ժողովրդական լուսավորության բնագա- վառում . . . . .	37
Կրոնական հարաբերությունների բնագա- վառում . . . . .	41
Տնտեսական բնագավառում . . . . .	42
Գյուղատնտեսության բնագավառում . . . . .	51
Բաշխման բնագավառում . . . . .	56
Փողային և բանկային գործի բնագավառում . . . . .	58
Ֆինանսների բնագավառում . . . . .	60
Բնակարանային հարցի բնագավառում . . . . .	62
Աշխատանքի պաշտպանության և սոցալի բնագավառում . . . . .	63
Ժողովրդական առողջապահության բնա- գավառում . . . . .	68

ՀԱՄԱՄԻՌՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ  
(ԲՈՂՇԵՎԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ներածութիւն . . . . .	70
I Կուսակցութեան անդամները և նրանց պարտականութիւնները մասին . . . . .	72
II Կուսակցութեան անդամութեան թեկնածուները մասին . . . . .	79
III Համակրողները խմբակների մասին . . . . .	80
IV Կուսակցական կազմակերպութեան կառուցվածքի մասին . . . . .	82
V Կուսակցութեան կենտրոնական կազմակերպութիւնները մասին . . . . .	87
IV Կուսակցութեան յերկրային մարդային-հանրապետական կազմակերպութիւնները մասին . . . . .	92
VII Կուսակցութեան քաղաքային ու շրջանային (գյուղական ու քաղաքային) կազմակերպութիւնները մասին . . . . .	96
VIII Կուսակցութեան սկզբնական կազմակերպութիւնները մասին . . . . .	98
IX Կարմիր բանակի կուսակազմակերպութիւնները մասին . . . . .	102
X Արտակուսակցական կազմակերպութիւնները կուսակցական խմբերի մասին . . . . .	104
XI Ներկուսակցական դեմոկրատիայի և կուսակցական կարգապահութեան մասին . . . . .	105
XII Կուսակցութեան դրամական միջոցների մասին . . . . .	109

Հայերենը խմբագրւեց Ս. ՇԱՆՈՒՆԻ

Главлит № 4118  
Азпартиздат 15  
Заказ № 363  
Печатных листов 4  
Количество печатн. знаков 134.400  
Тираж 5.200  
Формат 82 62x94-1-82



«Ազգային գրադարան»



NL0180919

